

ՆԱԽ ՄԱՐԴ

Կեանքի խորհուրդը կայանում է հոգեւոր եւ ոչ թէ նիւթական շինարարութեան մէջ:

Չի կարելի միաժամանակ վատ մարդ, բայց եւ այնպէս լաւ Յայ լինել: Անկարելի է անհատի համար, առանց կեղծիքի, անձնական կեանքում նիւթակրօն, իսկ ազգային գործերում գաղափարապաշտ լինել: Նա, որ իրեն զգում է որպէս «ժամանակաւոր շունչ եւ կենդանութիւն առած մեքենայ»՝ չի կարող հասարակական ասպարէզում երեւան գալ որպէս կենդանի հոգեկանութիւն: Նա, որ որպէս մարդ, իդէալականացնում է նիւթն ու նրանից բղխող բաւականութիւնները, որ կեանքի նպատակը համարում է կրաւորական հաճոյքները - որպէս Յայ չի կարող լինել անձնէր, արի, հայրենապաշտ: Միեւնոյն մարդու մէջ չեն ապրիր միաժամանակ ստրկամիտն ու ազատատենչը: Նա կ'ան մէկն է, կ'ան միւսը: Սեղմ ասած՝ չի կարելի որպէս մարդ, կեանքում դաւանել անձնական երջանկութեան վարդապետութիւնը, իսկ որպէս գործիչ, առանց կեղծիքի, ընդունել Տոսթոլեւքուն, թէ մարդկութիւնն ապրում է ոչ թէ երջանկութեան, այլ անսահման կատարելագործման համար:

Այո՛, չի կարելի անկատար մարդ, բայց կատարեալ Յայ լինել: Միայն մարդ կոչելու արժանին կարող է արժանաբար Յայ կոչել: Դա այբուբենական մի ճշմարտութիւն է, որ երկար իմաստասիրութիւն չի վերցնում:

* * *

Եղի՛ր իդէալիստ, երիտասարդ ընթերցող, քանզի նիւթապաշտը դառնում է մարդ - մեքենայ, կոկորդ ու ստամոքս միայն. իսկ նմանը ե՛ւ ապրում է, ե՛ւ չի ապրում. իսկ նմանը աւելի անասուն է, քան մարդ: Եղի՛ր իդէալի ընդունակ, եւ բաւական մի՛ համարիր իմացականութեամբ զարգացումը, որ առանց սրտի կրթութեան, աշխարհի չարիքները մեղմացնելու փոխարէն աճեցնում է յաճախ: Եղի՛ր ընդունակ՝ ինքնանորոգումի ճամբով սատար հանդիսանալ հասարակութեան բարոյական վերանորոգումին, խորապէս գիտակցելով, թէ միակ մարդը, որին կարող ես բարձրացնել - դա ի՛նքդ ես: Սկսի՛ր քեզնից: Եւ իմաստունի հարցին, թէ «ի՞նչ կ'ուզէիր լինել կեանքում,- յանուն ճշմարտութեան թոյնի բաժակը

դատարկելու դատապարտած Սոկրատէ՞սը, թէ՞ ճշմարտութիւնից դուրս ապրող խոզաբարոյ մի էակ», դու պատասխանիր - առաջինը:

* * *

Մշտատել անհանգստութիւն - ահա՛ այն սպանիչ տրամադրութիւնը, որ տիրում է արդի հասարակութեան եւ անհատի հոգում:

Մի բան պակասում է բոլորին, բոլորի՞ն:

Անորոշ ձանձրոյթ, ջղայնութիւն, ինքնապատճառ թախիծ,- ահա՛ անհատի հանապազօրեայ կեանքը:

Հարուստն իրեն աղքատ է զգում իր հարստութեան մէջ, նիւթապէս երջանիկը՝ բարոյապէս դժբախտ:

Կա՛յ, կա՛յ մի բան, որ թունաւորում է մեր կարճատեւ ուրախութեան վայրկեանները, սպանում՝ ժպիտը մեր շրթունքների վրայ, խլում՝ մեր քունը, մեր հոգեկան անդորրութիւնը եւ սարսափեցնում՝ անարել ծերութեան ու մահուան ուրակականներով:

Կա՛յ մի խորհրդաւոր ձեռք, որ աներեւութաբար թոյն եւ արտօսը է կաթեցնում մեր շրթունքներին մօտեցող գինու եւ հաճոյքի բաժակի մէջ:

Կա՛յ մի պատուհասող ոյժ, մի ձեռք, որ դատում է մեզ, պատժում ամեն օր, ժամ, վայրկեան:

Ի՞նչ է նշանակում սա: Ո՞վ է, ի՞նչ է այդ խորհրդաւոր ոյժը:

- Դա մեր խիղճն է, ընթերցո՞ղ, մեր գիտակցութիւնը, թէ բարի չենք, առաքինի չենք, հայրենասէր չենք. թէ՛ կատարեալ Հայ եւ մարդ չենք:

Գ. Նժդեհ
1927թ.

«ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՆԱՆ» ԴԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Գազիկ Տեր-Չարությունյան

2011-ի «արաբական գարունը» եւ դրան հաջորդած զարգացումները էապես փոխեցին Նոր Մերձավոր Արեւելքի քաղաքական բովանդակությունը: Կատարվածի վերաբերյալ գնահատականները տարբեր են, երբեմն՝ իրարամերժ:

Գնահատականներ

Որոշ հետազոտողներ, օրինակ՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Արեւելագիտության ինստիտուտի տնօրեն Վիտալի Նաումկինը, գտնում են որ «արաբական գարունն» անսպասելի էր միջազգային հանրության համար: Սակայն հարկ է նշել, որ հեղափոխական գործընթացները սպասելի էին նվազագույնը առանձին վերլուծաբանների համար, որոնցից նշենք տարածաշրջանի խոշոր գիտակ Վալիդ Ֆարեսին ու Ռուսաստանի Արտաքին եւ պաշտպանության քաղաքականության խորհրդի նախագահ Սերգեյ Կարազանովին:

Կասկած չի հարուցում, որ գործընթացները տարածաշրջանում պետք է որ կանխատեսվեին նաեւ առաջատար «ուղեղային կենտրոնների» կողմից: Օրինակ, դեռեւս 1990-ականներին ԿՅՎ-ն սահմանել էր այն հիմնական նախանշանները, որոնք վկայում են այս կամ այն երկրում «հեղափոխական իրադրության» մասին, իսկ համեմատաբար վերջերս այդ ուղղությամբ ծավալուն հետազոտություն է իրականացրել ԱՄՆ Ազգային հետախուզության Չեռանկարային հետազոտական ծրագրերի վարչությունը (IARPA): Հայտնի է նաեւ, որ «ուղեղային կենտրոնները» եւ հատուկ ծառայությունների վերլուծական ստորաբաժանումները կառավարություններին են ներկայացնում ոչ միայն լուր տեղեկատվություն, այլեւ խորհրդատվություն, թե ինչպես այս կամ այն հնարավոր գործընթացները ծառայեցնել իրենց ազգային շահերին: Այսինքն՝ արաբական հեղափոխական սցենարները, ամենայն հավանականությամբ, չէին կարող վրիպել նվազագույնը ամերիկյան վարչակազմի աչքից:

Այս հանգամանքը բնավ չի նշանակում, թե արաբական գործընթացները նախապես «ծրագրված էին ԱՄՆ-ի կողմից», ինչպես պնդում են որոշ վերլուծաբաններ՝ նկատի ունենալով «գունավոր հեղափոխությունների» տեխնոլոգիաներին այդ տերության տիրապետումը: Ակնհայտ է, որ

արաբական աշխարհում (22 պետություն՝ շուրջ 300 մլն բնակչությամբ) բուռն զարգացումների համար ստեղծված էին բոլոր «ներքին» նախադրյալները. երկարամյա ավտորիտար ռեժիմներ, ժողովրդագրական բարդ խնդիրներ, ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակ եւ այլն: Բավական է նշել, որ արաբական երկրներում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմում է ընդամենը \$2000, բնակչության 20%-ն ապրում է օրը \$2 եկամտով: Եվ այդ ամենը՝ ակտիվ եւ մասամբ գործազուրկ երիտասարդության առկայության դեպքում, որը տիրապետում է մոբիլ կապին, հնտերնետին ու ընդգրկված է վիրտուալ սոցիալական ցանցերում:

Սիեւնույն ժամանակ, դժվար է համաձայնել այն հետազոտողների հետ, որոնք պնդում են, թե հեղափոխությունները զուտ «ժողովրդավարական շարժման» արդյունք են: Համաձայն մեր մոտեցման, այդ հեղափոխությունների հնարավորությունը կանխատեսվել էր աշխարհաքաղաքական դերակատարների կողմից, եւ նրանք, գործելով սեփական ազգային շահերի համատեքստում, փորձեցին ուղղորդել եւ հնարավորինս կառավարելի դարձնել այդ գործընթացները, իսկ Լիբիայի պարագայում՝ անմիջականորեն միջամտել զարգացումներին: Նման վարկածը հաստատվում է այն վերլուծություններով, ըստ որոնց՝ տարածաշրջանային գործընթացները լիովին համընկնում են ԱՄՆ շահերին, եւ անգամ Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերումը փոխհատուցվում է, քանի որ ստեղծված իրավիճակը հնարավորություն է տալիս ձեռքազատվել Իրանի ու Սիրիայի «հակամերիկյան ռեժիմներից»:

Ի լրումն, ստեղծված անկայուն իրավիճակը մեծացնում է Միացյալ Նահանգների գործընկերների՝ Սաուդյան Արաբիայի, Կատարի, Քուվեյթի եւ Օմանի (ի դեպ, ըստ կանխատեսումների՝ այդ «բարեկեցիկ» երկրներում մոտ ապագայում լուրջ խնդիրներ են առաջանալու, ինչն էլ կիրահրի ժողովրդական հուզումներ եւ համակարգային փոփոխություններ) ռազմաքաղաքական կախվածությունը Վաշինգտոնից: Մասնավորապես, դա թույլ է տալիս «ծանրաբեռնել» ամերիկյան ռազմարդյունաբերական համալիրը. ամերիկյան ռազմական տեխնիկայի վաճառքն այդ երկրներին մոտակա տարիներին կազմելու է շուրջ \$60 մլրդ, ինչը կարելու է տնտեսական հիմնախնդիրներ ունեցող ԱՄՆ-ի համար:

Նման մոտեցմանը զուգահեռ, որոշ վերլուծաբաններ (օրինակ՝ Վաշինգտոնում տեղակայված Մերձավորարեւելյան խորհրդի նախագահ Զի Ֆրիմենը) գտնում են, որ ստեղծված իրավիճակում ամերիկացիները գործել են ոչ այնքան արդյունավետ եւ արդյունքում կորցրել են այդ տարածաշրջանում իրենց ազդեցության մի զգալի մասը: Կարծում ենք, որ վերջին գնահատականը որոշակիորեն համարժեք է իրողություններին,

սակայն այն պայմանավորված է ոչ այնքան ամերիկացիների «անարդյունավետ» գործողություններով, որքան բազմաբեկեռ գլոբալ հարթությունում ընթացող օբյեկտիվ բնույթի տեղաշարժերով:

Ինտեգրացիա եւ ֆրագմենտացիա

Կարելի է ամրագրել, որ «արաբական գարնան» արդյունքում՝ տարածաշրջանի մի շարք երկրներում սեկուլյար ավտորիտար ռեժիմները փոխարինվեցին իսլամական «թեքունով» քվազի-ժողովրդավարական վարչակարգերով: Խիստ կարելի է, որ այդ վարչակարգերին աջակցում է բնակչության մեծամասնությունը կազմող հատվածը, որը ձգտում է վերագտնել «արաբական-իսլամական ընդհանրական ինքնությունը»: Իրեն վերագտնող այդ նոր իսլամական արաբական աշխարհը ցուցաբերում է ինտեգրման միտումներ, եւ այս առումով Սաուդյան Արաբիայի թագավոր Աբդալլայի՝ միասնական արաբական պետություն ստեղծելու կոչը միանգամայն համարժեք է հնչում:

Դրա հետ մեկտեղ, հստակ ուրվագծվում են նաեւ Արեւմուտքից մեկուսանալու, քաղաքակրթորեն տարանջատվելու եւ դեպի Արեւելք «կողմնորոշվելու» միտումները: Այս երեւոյթը լիովին համապատասխանում է ԱՄՆ Ազգային հետախուզական խորհրդի (NIC) եւ ԵՄ Անվտանգության ուսումնասիրության ինստիտուտի (EUISS) կողմից դեռեւս 2010-ին կատարված մշակումներին, որոնցում ներկայացվել էին աշխարհի «ֆրագմենտացման» սցենարները:

Միջուկային հակամարտության հեռանկարը

Արաբական աշխարհում կատարվածն ավելի ակտուալացրեց «Իրանի հիմնախնդիրը», որի դերակատարումը, մասնավորապես, աճել է շիա-սուննի միջդավանական հարաբերությունների սրման արդյունքում: Այդ համատեքստում Իրանի ազդեցությունը տարածվում է, մասնավորապես, Իրաքի, Եմենի, Սիրիայի վրա եւ բարդացնում նրա հարաբերությունները Թուրքիայի ու ավանդական մրցակից Սաուդյան Արաբիայի հետ: ԱԷՄԳ եզրակացությունների վրա հիմնված ԱՄՆ եւ մասամբ՝ ԵՄ պատժամիջոցներն այսօր զուգորդվում են Իսրայելի եւ ԱՄՆ-ի կողմից հնչեցվող՝ Իրանի միջուկային օբյեկտներին ռազմական հարվածներ հասցնելու «խոստումներով»: Անշուշտ, Պարսից ծոցում ամերիկյան եւ իրանական ռազմածովային ուժերի անմիջական շփման եւ Հորնուզի նեղուցի փակման սպառնալիքի պարագաներում չի կարելի լիովին բացառել, որ այդ երկրների միջեւ սկսվեն իրավիճակային բնույթի

ռազմական գործողություններ: Սակայն տպավորությունն այնպիսին է, որ ամերիկա-իսրայելական ճնշումների հիմնական նպատակն Իրանի ներքաղաքական համակարգում իրենց ձեռնտու փոփոխությունների հասնելն է:

Որ ներկայիս ամերիկյան վարչակազմն առաջնային չի համարում Իրանի դեմ ռազմական գործողություններ ձեռնարկելը՝ հետեւում է ոչ միայն նման քայլի անկանխատեսելի հետեւանքներ ունենալու հանգամանքից (ինչպես հայտարարել էր Պենտագոնի ղեկավար Լեոն Պանետան): Դրա մասին է վկայում նաեւ Բարաք Օբամայի նոր ռազմական դոկտրինը, ըստ որի՝ զգալիորեն կրճատվելու են ռազմական ծախսերը: Այս ամենի առումով պատահական չէ, որ համաձայն ամերիկյան հեղինակավոր «Սթրատֆորի» ղեկավար Ջորջ Ֆրիդմանի խորհրդատվությունների՝ ԱՄՆ-ը այդ տարածաշրջանում պետք է կիրառի նոր ռազմավարություն եւ Իրանի հետ հարաբերությունները տեղափոխի համագործակցության դաշտ (ինչպես դա կատարվեց անցյալ դարի 70-ականներին՝ Չինաստանի հետ հարաբերություններում):

«Արաբական գարունը» հանգեցրել է տարածաշրջանում նաեւ Թուրքիայի դերակատարման մեծացմանը: Դա պայմանավորված է, մասնավորապես, նրանով, որ «հետհեղափոխական երկրներում» որպես կառավարման մոդել ընդունվել է թուրքական վարչակազմին հարազատ «չափավոր իսլամը»: Դա լրացուցիչ հիմք է հանդիսանում Թուրքիայի համար՝ համապատասխան նեոսուննիզմի գաղափարախոսական դրույթների, տարածելու իր ազդեցությունն այդ երկրներում: Ջուզահեռ՝ Սիրիայում ընթացող հայտնի զարգացումների արդյունքում էապես սրվել են Թուրքիա–Իրան հարաբերությունները:

Համաձայն փորձագիտական դիտարկումների եւ թուրքական աղբյուրների՝ տարածաշրջանային առաջատար դառնալու ձգտումը դրդում է Թուրքիային մշակել միջուկային զենք ստեղծելու սեփական ծրագիր: Այսինքն, տեսանելի հեռանկարում տարածաշրջանում կհայտնվի նվազագույնը երեք (Իսրայել, Իրան եւ Թուրքիա) միջուկային պետություն: Դա այն պարագայում, երբ նրանց միջուկ մշակված չեն միջուկային զինանոցների վերահսկման եւ դրանց կիրառման զսպման մեխանիզմներ, ինչպիսին ձեւավորվել էին ԱՄՆ-ի եւ ԽՍՀՄ-ի միջուկ Սառը պատերազմի տարիներին: Ավելին, այսօր այդ երեք երկրների քաղաքական համակարգերում այս կամ այն չափով կարեւորվում է կրոնական գործոնը, ինչը մեծացնում է ոչ պրագմատիկ որոշումներ ընդունելու հավանականությունը:

**«Արաբական գարուն»
հունանիտար չափողականությունը**

«Արաբական գարունը», ինչպես եւ ցանկացած հեղափոխական գործընթաց, զուգորդվել է բռնություններով եւ խաղաղ բնակչության բազմաթիվ զոհերով: Մասնավորապես, սեկուլյար ռեժիմների տապալումը եւ իսլամական գործոնի ակտիվացումն էապես սրել են միջդավանական (մասնավորապես, Սիրիայում՝ սուննի-ալեւի համայնքների միջեւ) եւ միջկրոնական (օրինակ, Եգիպտոսում՝ մուսուլմանների ու քրիստոնյա դպտիների միջեւ) հակասությունները: Ակտուալացել են նաեւ ինքնավարություն չունեցող տեղաբնակ ազգային փոքրամասնությունների խնդիրները (օրինակ՝ բերբերների հարցը, որոնց թիվը Թունիսում կազմում է մոտ 20 մլն):

Այդ խնդիրներն անմիջականորեն անդրադառնում են նաեւ հայերի վրա, որոնց թիվը տարածաշրջանում վերջին մի քանի տասնամյակում էապես նվազել է: Բավական է նշել, որ 2003թ. Իրաքի օկուպացիայի հետեւանքով այսօր գրեթե հայաթափ է եղել այդ երկրի մեր համայնքը, նման բնույթի խնդիրներ հասունանում են նաեւ Սիրիայում: Դա նշանակում է, որ պետք է մշակել մեր հայրենակիցների անվտանգությունն ապահովող որոշակի, գուցե եւ ոչ ավանդական մեթոդներ, ինչպես եւ՝ զուգահեռաբար քննարկել ազգային մտավոր-հոգեւոր ռեսուրսները եւ պատմամշակութային ժառանգությունը Հայրենիք տեղափոխելու հարցը:

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՐԴԻ ՓՈՒԼԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Հայկ Գաբրիելյան

Վերջին երկու ամիսներին Թուրքիայի ներքաղաքական կյանքը հարուստ էր մի շարք զարգացումներով, որոնք առնչվում են «իշխանություն–զինվորականություն» եւ «իշխանություն–ընդդիմություն» առճակատումներին: 2011 թվականի դեկտեմբերի կեսին թուրքական ընդդիմության առաջնորդ, ժողովրդա-հանրապետական կուսակցության (ԺՀԿ) նախագահ Քենալ Քըլըչդարողլուն հայտարարեց, որ 2012 թվականին Թուրքիայում պետք է անցկացվեն նախագահական ընտրություններ: Իր որոշումը Քըլըչդարողլուն հիմնավորում էր 2007 թվականի մայիսի 10-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) ընդունած եւ հոկտեմբերի 21-ի հանրաքվեի արդյունքներով (կողմ 69%, դեմ 31%) հաստատված սահմանադրական ուղղումներով:

Ըստ այդ ուղղումների՝ այսուհետ Թուրքիայի նախագահը պետք է ընտրվի ժողովրդի կողմից՝ 5+5 տարբերակով. 5 տարի ժամկետով՝ եւս մեկ անգամ նույն ժամկետով վերընտրվելու հնարավորությամբ: Պետք է նշել, որ մինչ այդ երկրի նախագահին ընտրում էր ԹԱՄԺ-ը՝ 7 տարի ժամկետով, առանց վերընտրման իրավունքի: Բացի այդ, տվյալ ուղղումներով ԹԱՄԺ պատգամավորների լիազորությունների ժամկետը 5 տարուց կրճատվեց 4 տարվա:

Այս ամենը նկատի ունենալով՝ Քըլըչդարողլուն ընդգծում էր, որ այդ ուղղումներն արդեն իսկ ազդել են խորհրդարանական ընտրությունների վրա, որոնք անցկացվել են 2011 թվականի հունիսի 12-ին, եւ դա՝ այն դեպքում, երբ նախորդ խորհրդարանական ընտրությունները Թուրքիայում անցկացվել էին դրանից ոչ թե 5, այլ 4 տարի առաջ՝ 2007 թվականի հուլիսի 22-ին: Հետեւաբար, ըստ Քըլըչդարողլուի՝ խորհրդարանական ընտրությունների վրա արդեն իսկ ազդած այդ ուղղումները պետք է նմանատիպ ձեւով ազդեն նաեւ նախագահական ընտրությունների վրա, որոնք պետք է անցկացվեն 2012 եւ ոչ թե 2014 թվականին: Հիշեցնենք, որ ներկայիս նախագահ Աբդուլա Գյուլը Թուրքիայի խորհրդարանի կողմից երկրի 11-րդ նախագահ է ընտրվել 2007 թվականի օգոստոսի 28-ին:

Քըլըչդարողլուից բացի, 2012 թվականին (երբ կլրանա Աբդուլա Գյուլի պաշտոնավարման 5-ամյակը) Թուրքիայում նախագահական ընտրութ-

յունների անցկացման պահանջով հանդես եկավ նաև ԹԱՄԺ-ում ներկայացված մյուս հիմնական ընդդիմադիր ուժը՝ Ազգայնական շարժում կուսակցությունը (ԱՇԿ), ինչպես նաև քրդական խաղաղություն եւ ժողովրդավարություն կուսակցությունը (ԽԺԿ):

Սակայն իշխող Արդարություն ու զարգացում կուսակցությունը (ԱԶԿ) ներկայացնող ԹԱՄԺ նախագահ Ջեմիլ Չիչեքը հայտարարեց, որ այդ խնդրի կարգավորմամբ պետք է զբաղվի խորհրդարանը, իսկ եթե վերջինը չկարողանա դա անել, ապա այդ հարցի լուծումը կհանձնարարվի Բարձրագույն ընտրական խորհրդին: 2012 թվականի հունվարի 10-ին ԹԱՄԺ սահմանադրական հանձնաժողովը վճռեց, որ Գյուլը պաշտոնավարելու է 7 տարի (մինչեւ 2014 թվականը)՝ առանց վերընտրման իրավունքի: Ի դեպ, ներկայումս շատ է նշվում, թե Էրդողանը 2014 թվականի նախագահական ընտրություններում առաջադրելու է սեփական թեկնածությունը եւ դառնալու է ժողովրդի կողմից ընտրված Թուրքիայի առաջին նախագահը:

2012 թվականի հունվարի 5-ին Ստամբուլում 7-ժամյա հարցաքննության ենթարկվեց Թուրքիայի զինված ուժերի Գլխավոր շտաբի (ԳՇ) նախկին (26-րդ, 2008–2010թթ.) պետ, բանակի պաշտոնաթող գեներալ Իլքեր Բաշբուլը, որն այդ ընթացքում պատասխանեց 50-60 հարցի: Դրանից ժամեր անց՝ արդեն հունվարի 6-ին, Ստամբուլի դատարանը վճռեց նրան կալանքի տակ առնել եւ ուղարկել Ստամբուլի մոտ գտնվող Սիլիվրիի բանտ: Բաշբուլը մեղադրվում է Թուրքիայի Քրեական օրենսգրքի (ՔՕ) 314-րդ հոդվածի 1-ին («ահաբեկչական խմբավորման ձեւավորում ու ղեկավարում») եւ 312-րդ հոդվածի 1-ին կետերով («ուժ ու բռնություն գործադրելու միջոցով գործող կառավարության տապալման փորձ»): Նրան սպառնում է մինչեւ 15 տարվա ազատազրկում:

Հարկ է նշել, որ սա աննախադեպ իրադարձություն է Թուրքիայի Հանրապետության (ԹՀ) ավելի քան 87-ամյա պատմության ընթացքում, որ քաղաքացիական դատարանը կալանքի տակ է վերցնում ԳՇ նախկին պետին: Մեղադրող կողմը պնդում է, որ Բաշբուլն այսպես կոչված «ինտերնետ-հուշագրի» հիմնադիրներից է: Խոսքն ինտերնետում թուրքական իշխանություններին վարկաբեկող նյութերի տեղադրման մասին է:

Սակայն կալանքի տակ վերցվելուց հետո Բաշբուլը հերքեց այդ մեղադրանքը. «Ես վատ նպատակներ չեմ հետապնդել եւ չեմ ցանկացել 1-2 ինտերնետային կայք ստեղծելու միջոցով տապալել գործող կառավարությունը: Եթե ես իսկապես ցանկանայի դա, ապա դրա համար կընտրեի այլ ուղի. իմ ձեռքի տակ կար 700.000 զինժառանգող: Դուք ահաբեկչական խմբավորման ստեղծման մեջ մեղադրում եք մի մարդու, ով գտնվել է ահաբեկչության դեմ պայքարի առաջին շարքերում: Սա անհեթեթություն

է»: Հունվարի 7-ին Բաշբուղի փաստաբան Իլքայ Սեզերը հայտարարեց, որ Բաշբուղը 7 տարի շարունակ (2003 թվականի օգոստոսից մինչև 2010 թվականի օգոստոս) աշխատել է կառավարության համար՝ վարչապետ Էրդողանի գլխավորած ԱԶԿ-ի հետ միասին, եւ ապշած է իր դեմ ուղղված մեղադրանքներից:

Հունվարի 10-ին Էրդողանն առաջին անգամ անդրադարձավ Բաշբուղի կալանավորմանը. «Ես եւ ԱԶԿ-ն ցանկանում ենք, որ այդ դատական գործընթացն ավարտվի հնարավորինս շուտ, եւ որ դա ընթանար առանց Բաշբուղի կալանավորման, որ նա այդ ընթացքում գտնվեր ազատության մեջ: Այժմ այդ դատական գործընթացն ընթացքի մեջ է, եւ սխալ կլինի այդ կապակցությամբ հայտարարություններ անելը: Բաշբուղն իմ գործընկերն է, որի հետ ես աշխատել եմ երկու տարի»: Աբդուլա Գյուլն իր հերթին հայտարարեց, որ Բաշբուղի դատով պետք է զբաղվի Գերագույն դատարանը, սակայն այդ որոշումը պետք է ընդունեն համապատասխան մարմինները:

Բաշբուղի կալանավորումը խիստ քննադատության արժանացավ ԺՀԿ-ի ու ԱՇԿ-ի կողմից: Հունվարի 10-ին Քենալ Քըլըչդարողլուն հայտարարեց. «Ավելի վաղ ես հայտարարել եմ, որ կառավարության որոշումներն ի կատար ածող հատուկ լիազորություններ ունեցող դատարանն արդար չէ: Ես չեմ փոխել իմ այդ մտտեցումը: Եթե ԳՇ պետն ահաբեկիչ է, ապա այդ դեպքում ո՞վ է վարչապետը: Մեր ուղեղներում արդեն չի տեղավորվում, որ կարող ենք ունենալ ահաբեկիչ ԳՇ պետ»: Հիշեցնենք, որ Թուրքիայի սահմանադրության 117-րդ հոդվածի համաձայն իր պարտականությունների ու լիազորությունների իրականացման ժամանակ ԳՇ պետը պատասխանատու է երկրի վարչապետին:

Նույն օրը ԱՇԿ նախագահ Դելլեթ Բահչելին հայտարարեց. «Մի՞թե Բաշբուղն ահաբեկիչ է, իսկ մեր ժողովուրդը տեղյակ չէ այդ մասին: Եթե նա ահաբեկիչ է, ապա այդ դեպքում ո՞վ է Իմրալը կղզում պահվող մարդը (նկատի է առնվում 1999 թվականից այնտեղ ցմահ ազատազրկում կրող ՔԿԿ հիմնադիր Աբդուլա Օջալանը), եւ ինչո՞ւ է նա պահվում այնտեղ: Մի՞թե Բաշբուղին էլ են ուղարկելու Իմրալի բանտ: Այդ կալանքը կարելու է ցանկացած տեսանկյունից: Բաշբուղին ներկայացված մեղադրանքներն անտրամաբանական են: Իմ հարցը հետեւյալն է. եթե Բաշբուղը ստեղծել եւ ղեկավարել է ահաբեկչական խմբավորում, ապա որտե՞ղ են դրա անդամները: Մի՞թե օգոստոսի 30-ին (Հաղթանակի եւ Թուրքիայի զինված ուժերի օր) գլխավոր հրամանատարի կարգավիճակով շնորհավորանքներ ընդունող նախագահ Գյուլը չի հասկացել, որ սեղմում է ահաբեկչի ձեռքը»:

Չունվարի 14-ին հայտնի դարձավ, որ Ստամբուլի դատախազությունը պատրաստվում է հետաքննություն սկսել Թուրքիայի զինված ուժերի ԳՇ եւս մեկ նախկին պետի դեմ: Խոսքը 25-րդ ԳՇ պետ Յաշար Բույուքանըթի (2006–2008) մասին է: Դրա պատճառն այն է, որ հակակառավարական ինտերնետային կայքեր ստեղծելու մեջ մեղադրվող Բաշբուլը հայտարարել էր, թե այդ կայքերը ստեղծվել են իր պաշտոնավարման ժամկետից առաջ՝ ընդգծելով, որ ինքը ոչինչ չի իմացել դրանց գոյության մասին: Փաստորեն, դրանով իսկ նա անուղղակիորեն մատնացույց է արել իր նախորդին՝ Յաշար Բույուքանըթին¹:

Չունվարի 10-ին Անկարայի դատարանն ընդունեց ԳՇ նախկին (17-րդ) պետ, 94-ամյա Քենան Էվրենի եւ ռազմաօդային ուժերի նախկին հրամանատար, բանակի պաշտոնաթող գեներալ, 86-ամյա Թահսին Շահինքայայի դեմ պատրաստված գործը: Նրանք մեղադրվում են 1980 թվականի սեպտեմբերի 12-ին² Թուրքիայի պատմության ընթացքում ամենարյունալի ռազմական հեղաշրջման կազմակերպման մեջ, որի արդյունքում Քենան Էվրենը 1982 թվականի նոյեմբերի 7-ին դարձավ Թուրքիայի 7-րդ նախագահ:

Նրանց նկատմամբ մեղադրականը բաղկացած է 80 էջից: Օրինական կառավարության դեմ դավ նյութելուց ու նրան գահընկեց անելուց բացի, նրանք մեղադրվում են խոշտանգումների մեջ, որոնք հեղաշրջմանը հաջորդած 3 տարիների ընթացքում կիրառվում էին զինվորական իշխանության ժամանակ: Թուրքիայի ԶՕ 80-րդ եւ 146-րդ հոդվածներով նախատեսվում է ցմահ ազատազրկում: Սակայն զինվորականները չեն ընդունում այդ ամենը՝ ընդգծելով, որ 1980 թվականին իրենք երկիրը փրկել են անարխիայից, քանի որ ռազմական հեղաշրջման նախօրեին աջ եւ ձախ ուժերի միջեւ պայքարի արդյունքում բռնությունը սկսել էր տարածվել փողոցներում: Չարկ է նշել, որ 2010 թվականի հուլիսի վերջերին Էվրենը հայտարարել էր, թե կնախընտրի ինքնասպան լինել, քան այդ տարիքում բանտ մատել՝ ընդգծելով, որ չի փոշմանել իր արարքի համար եւ երկրորդ անգամ նույնպես կզնար այդ քայլին:

Չունվարի 12-ին թուրքական Sabah թերթը գրեց, որ նրանք գտնվելու են ազատության մեջ եւ դատարան են ներկայանալու ընդամենը մեկ անգամ. «Այժմ, եթե նրանց մեղքն ապացուցվի, ապա նրանց գեներալական կոչումները կարող են իջեցվել մինչեւ շարքայինի: Բացի այդ, նրանք կարող են զրկվել իրենց ծառայության ընթացքում ստացած պետական պարգևներից»:

Փաստորեն, սա ԹՉ պատմության ընթացքում նույնպես աննախադեպ իրադարձություն է, որ նախկին նախագահը կանգնելու է դատարանի

առջեւ: Առաջին դատական նիստը պետք է տեղի ունենա ապրիլի 4-ին, ինչը համընկավ ԱՇԿ հիմնադիր Ալփարսլան Թյուրքեշի մահվան տարեկիցին: Դատարանն էվրենին ու Շահինքայային արգելել է լքել երկիրը:

«Զինվորական ճակատում» գործուն քայլեր ձեռնարկելուց հետո իշխանությունները ձեռնամուխ եղան «ընդդիմադիր ճակատին» հարվածներ հասցնելուն: Հունվարի 10-ին Ստամբուլի դատախազությունը դիմեց ԹԱՄԺ-ին՝ Քենալ Քըլըչդարողլուին պատգամավորական անձեռնմխելիությունից զրկելու համար: Եթե ԹԱՄԺ-ն ընդառաջի Ստամբուլի դատախազությանը, ապա Քըլըչդարողլուի նկատմամբ կհարուցվի քրեական գործ: Ստամբուլի դատախազությունը կարծում է, որ Քըլըչդարողլուն հեղինակագրկում է արդարադատության մարմիններին եւ ճնշումներ է բանեցնում գործող իշխանություններին տապալելուն առնչվող «Էրգենեքոն»-ի գործը քննող դատարանի վրա:

2 պետք է նոռանալ, որ 2011 թվականի նոյեմբերի 10-ին Քըլըչդարողլուն այցելել էր Սիլվիոյի բանտ եւ հանդիպել «Էրգենեքոն»-ի գործով ձերբակալված ԺՀԿ-ական պատգամավորներ Մուսթաֆա Բալբայի եւ Մեհմեթ Հաբերալի հետ: Քըլըչդարողլուն այդ մեկուսարանն անվանել էր «Թուրքիայի խայտառակություն» եւ «21-րդ դարի համակենտրոնացման ճամբար»: Բացի այդ, նա արդարադատության մարմիններին մեղադրել էր իշխանությունների քաղաքական պատվերը կատարելու մեջ՝ ընդգծելով, որ չի կարող նրանց անվանել դատավորներ (ինչը կրկնվեց նաեւ Բաշբուրդի կալանավորումից հետո):

Նույն օրը՝ հունվարի 10-ին, Քըլըչդարողլուն դիմում ուղարկեց ԹԱՄԺ-ին՝ խնդրելով իրեն զրկել պատգամավորությունից: Քըլըչդարողլուն հայտարարեց, որ ամենեւին էլ չի զգում պատգամավորական անձեռնմխելիության կարիքը. «Հիմար է այն քաղաքական գործիչը, ով վախենում է բանտում հայտնվելուց»:

Քըլըչդարողլուն անդրադարձել է նաեւ Իլքեր Բաշբուրդի կալանավորմանը. «Ասում են, թե Բաշբուրդն ահաբեկիչների ղեկավարն է, նա ստեղծել է ահաբեկիչների խմբավորում: Այստեղ առկա է երկու տարբերակ. ա) վարչապետ Էրդողանն իմացել է, որ Բաշբուրդն ահաբեկչական կազմակերպության ղեկավար է եւ ոչ մի բան չի ձեռնարկել այդ կապակցությամբ, ինչը հանցագործություն է, բ) վարչապետը ոչինչ չի իմացել այդ մասին, ինչը կատարելապես ամոթալի է»:

Այսպիսով, Էրդողանը շարունակում է բարձրաստիճան զինվորականների դեմ իր գործուն պայքարը: Նրանց նկատմամբ քրեական հետապնդումները կարող են լավ դաս հանդիսանալ մյուսների համար, ովքեր կունենան գործող կառավարությունը տապալելու մտադրություն:

Եվրենի փորձը ցույց է տալիս, որ ներկայիս Թուրքիայի համար այդ առումով խնդիր չէ անգամ 30-ամյա վաղեմություն ունեցող հակակառավարական գործողությունը: Յունվարի 10-ին ելույթ ունենալով Թուրքիայի խորհրդարանում՝ Էրդողանը հայտարարեց, որ հեղաշրջումների ժամանակն անցել է:

¹ Դեռևս 2011 թվականի հունիսի սկզբին թուրքական Aydinlik թերթը սենսացիոն հոդված էր տպագրել, ըստ որի՝ շուտով ձերբակալվելու են ԳՇ նախկին պետեր, բանակի գեներալներ Յաշար Բույուքանըթն ու Իլքեր Բաշբուլը (տվյալ ժամանակ ցամաքային զորքերի հրամանատար), որոնք 2007 թվականին կուլիսների հետևում մի շարք քայլեր են ձեռնարկել ԹԱՄԺ-ի կողմից Գյուլի նախագահ ընտրվելու դեմ:

² 1980 թվականի սեպտեմբերի 7-ին ԳՇ պետ Եվրենը եւ 4 բարձրաստիճան հրամանատարներ՝ ցամաքային զորքերի, ռազմածովային, ռազմաօդային ուժերի ու ժանդարներիայի հրամանատարներ Նուրեթթին Էրսիմը (մահացել է 2005թ.), Նեժաթ Թյուները (մահացել է 2011թ.), Թահսին Շահինքայան եւ Սեդաթ Ջելասունը (մահացել է 1998թ.) որոշեցին գահընկեց անել գործող կառավարությունը: Սեպտեմբերի 12-ին Եվրենի գլխավորած Ազգային անվտանգության խորհուրդն Ազգային հեռուստատեսությամբ հայտարարեց պետական հեղաշրջման մասին: Ողջ երկրում հայտարարվեց ռազմական դրություն, ազատ արձակվեցին խորհրդարանն ու կառավարությունը, դադարեցվեց Սահմանադրության գործունեությունը, արգելվեցին կուսակցություններն ու արհմիությունները, զինվորականների «սեւ ցուցակում» հայտնվեց ավելի քան կես միլիոն մարդ, ձերբակալվեց մոտ 650.000 մարդ, կալանավորվեց 230.000 մարդ, 14.000 մարդ զրկվեց քաղաքացիությունից եւ այլն: Ջինվորականները հաստատեցին ԹՀ հիմնադիր Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի սկզբունքներին իրենց հավատարիմ լինելը:

ԻՐԱՆԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ

Սեւակ Սարուխանյան

Ներկայումս միջազգային հանրության ողջ ուշադրությունը սեւեռված է ԱՄՆ–Իրան հակամարտության վրա, որը, ըստ որոշ գնահատականների, կարող է վերածվել ռազմական ընդհարման: Սակայն պակաս կարեւոր չեն նաեւ ներքաղաքական զարգացումներն Իրանում, որտեղ մարտի 2-ին տեղի են ունենալու խորհրդարանական ընտրություններ:

2012թ. մարտի 2-ին Իրանում անցկացվելիք խորհրդարանական ընտրությունները կարեւոր նշանակություն են ունենալու Իրանի ապագայի համար՝ պայմանավորված մի քանի կարեւոր հանգամանքով.

1. Սրանք առաջին համապետական ընտրություններն են 2009-ի նախագահական ընտրություններից հետո, որոնք ավարտվեցին ցույցերով եւ դրանց արյունալի ճնշմամբ: Այս առումով գալիք ընտրությունները կարեւոր են հոգեբանական տեսանկյունից եւ կոչված են ցույց տալու, թե որքանով են իշխանություններն ավելի վերահսկելի դարձրել քաղաքական գործընթացները երկրում եւ որքանով են կարողացել կոտրել ընդդիմության կազմակերպչական ներուժը:

2. Ալի Խամենեյի 2011-ի հոկտեմբերի հայտարարությունից հետո, համաձայն որի՝ հնարավոր է, որ Իրանում վերացվի նախագահի պաշտոնը, որը կփոխարինվի խորհրդարանի կողմից ընտրված վարչապետի պաշտոնով, այդ երկրի խորհրդարանն օրենսդիր մարմնից միանգամից կարող է վերածվել կարեւորագույն քաղաքական մարմնի, որում մեծամասնություն ունեցող ուժերը կարող են ինքնուրույն ձեւավորել պետության գործադիր մարմինը եւ դրա կազմը:

3. Եվ վերջապես, Չորմուզի նեղուցում ստեղծված իրավիճակը, որը գնահատվում է որպես իրանա-ամերիկյան ռազմական բախման հնարավոր պատճառ, կարեւորում է Իրանում ներքաղաքական կայունության պահպանման անհրաժեշտությունը: Եթե իշխանությունները չկարողանան ընտրություններն անցկացնել այն ձեւաչափով, որ դրանք չհանգեցնեն հերթական քաղաքացիական ընդվզման, ապա ամերիկյան ռազմական ներխուժման հնարավորությունները որոշակիորեն կավելանան:

Ընդդիմությունը

2011-ի դեկտեմբերին Իրանի Պահապանների խորհրդի ղեկավար Ա.Ջանաթին հայտարարեց, որ 2012-ի խորհրդարանական ընտրություններին «մասնակցության կարիք չունեն այն մարդիկ, որոնք ցույց են տվել իրենց դավաճանությունն իսլամական հանրապետությանը»: Չնայած իրանական ընդդիմության անունն անմիջականորեն չտրվեց, սակայն ակնհայտ էր, որ խոսքը բարեփոխիչների մասին է: Ա.Ջանաթիի հայտարարությունը կարելի է համարել վճռորոշ հետագա պայքարի ընթացքի համար, քանի որ հենց նրա կողմից ղեկավարվող Պահապանների խորհուրդն է հաստատում ընտրություններին մասնակցող թեկնածուներին անուն առ անուն, ըստ օրենսդրությանը եւ իսլամական հանրապետության գաղափարաբանությանը նրանց համապատասխանության: Ջանաթիի հայտարարությունից հետո ակնհայտ դարձավ, որ Իրանի ակտիվ ընդդիմության ներկայացուցիչները պարզապես չեն գրանցվելու որպես թեկնածուներ եւ զրկվելու են խորհրդարանում հայտնվելու համար պայքարին մասնակցելու հնարավորությունից:

Այս հայտարարությունից հետո Իրանի երկու նախկին նախագահները հանդես եկան բարեփոխիչներին եւ հասարակությանն ուղղված՝ ընտրությունները բոյկոտելու կոչով:

Դեկտեմբերի 19-ին Իրանի նախկին նախագահ Ա.Յաշեմի-Ռաֆսանջանին կոչ արեց չմասնակցել հերթական ընտրություններին, որոնք «ոչ թե ընտրությունների են մնան լինելու, այլ նախապես ծրագրված ձեւականության»: Պետք է նշել, որ արդեն դեկտեմբերին իշխանությունները բավական հաջող նախապատրաստական աշխատանք տարան Ա.Յաշեմի-Ռաֆսանջանիի հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու ուղղությամբ: Մասնավորապես, դեկտեմբերի 24-ին սկսվեց նրա աղջկա՝ Ֆաեզե Յաշեմիի դատավարությունը, որը մեղադրվում է հակասահմանադրական գործողությունների մեջ, ինչի հաստատման դեպքում կարող է դատապարտվել մինչեւ 20 տարվա ազատազրկման կամ Իրանից վտարման: Իսկ դեկտեմբերի 31-ին ոստիկանության որոշմամբ արգելափակվեցին Յաշեմի-Ռաֆսանջանիին պատկանող բոլոր ինտերնետ կայքերը, համացանցից ջնջվեցին նախկին նախագահի ելույթներով բոլոր տեսանյութերը, որոնք պարունակում էին քննադատություն իշխանությունների հասցեին:

Այս երկու քայլով իշխանությունները փորձեցին ավելի կառավարելի դարձնել Յաշեմի-Ռաֆսանջանիի գործողությունները, որոնք, եթե վերա-

հսկելի չլինեն, կարող են լուրջ անկայունություն մտցնել ընտրապայքարի մեջ: Այսօր կարելի է ասել, որ Հաշեմի-Ռաֆսանջանին նախընտրական ամսվա ընթացքում ավելի զգույշ կլինի իր կոչերում եւ հայտարարություններում, ինչի ապացույցն է այն, որ նրա կողմից վերահսկվող եւ պրոֆեսոր Մ.Նաջաֆիի կողմից ղեկավարվող սահմանափակ բարեփոխական Գործադիր կառուցողականների կուսակցությունը հայտարարել է, թե մասնակցելու է գալիք ընտրություններին: Ավելին, ծայրահեղ ընդդիմության կողմից ընտրությունների բոյկոտի պայմաններում Հաշեմի-Ռաֆսանջանին կարող է ակնկալել, որ այս կուսակցությունը կարող է ստանալ ավելին, քան ազատ մրցակցության պայմաններում:

Իրանի նախկին մյուս նախագահը՝ Մ.խաթամին, որը հասարակության լայն շրջանակներում ունեցած բարձր վարկանիշից բացի, ի տարբերություն Հաշեմի-Ռաֆսանջանի, լուրջ ֆինանսական, կազմակերպչական եւ վարչական ռեսուրսների չի տիրապետում, ավելի հետեւողական եւ ազատ կերպով կարողացավ հանդես գալ ընտրությունների բոյկոտման կոչերով: Նա նախապես հայտարարեց, որ քանի դեռ տնային կալանքից չեն ազատվել ընդդիմության առաջնորդներ Մ.Սուսավին եւ Մ.Քյարուբին, ընտրությունների անցկացումն անիմաստ է: Հետո, երբ ակնհայտ դարձավ, որ Պահապանների խորհուրդն ընդդիմության անգամ տնային կալանքի տակ չգտնվող ներկայացուցիչներին չի գրանցելու որպես պատգամավորության թեկնածուներ, խաթամին կոչ արեց ընդհանրապես չմասնակցել ընտրություններին: Հունվարի սկզբին Մ.խաթամին հանդես եկավ իշխանությունների համար շատ տհաճ հայտարարությամբ. նա, մասնավորապես, նշեց, թե իշխանություններն ասել էին, որ պայմաններ կստեղծեն ընտրություններն այնպես անցկացնելու համար, որ ընդդիմությունը վերադառնա լեգալ քաղաքականության դաշտ, սակայն նրանք «արեցին ճիշտ հակառակը եւ ավելի բարդացրին իրավիճակը»:

Փաստորեն, այն, ինչ Պահապանների խորհուրդն առաջարկեց ընդդիմությանը, «կիսամասնակցությունն» է ընտրություններին, որոնց արդյունքում խորհրդարանում կարող են հայտնվել սահմանափակ թվով եւ չափավոր ընդդիմադիր հայացքներ ունեցող գործիչներ: Այս պայմաններում իրանական ընդդիմադիր թեւը որոշեց գնալ ընտրությունների բոյկոտի, ինչով փորձելու է լեգիտիմությունից զրկել հաջորդ խորհրդարանը: Եվ չնայած Իրանի ՆԳ նախարար Մ.Սոհամադ-Նաջարը հունվարի 14-ին հայտարարեց, որ պատգամավորության թեկնածու գրանցվելու համար դիմում ներկայացրած 5000 քաղաքացիների 14%-ն ընդդիմության ներկայացուցիչներ են, նրանք հենց այն չափավոր ընդդիմադիրներն

են, որոնք փորձելու են ապագա խորհրդարանական ընտրություններում բարեփոխիչների մասնակցության ֆոն ստեղծել:

Այս պայմաններում իշխանությունների համար կարելու է լինելու ապահովել քաղաքացիների մասնակցությունն ընտրություններին, ինչը նույնպես մեծ խնդիր է: Խորհրդարանական ընտրություններն առանց այդ էլ վերջին տասնամյակում կորցրել էին իրենց կարելությունը հասարակության համար: Եթե 2000-ին դրանց մասնակցել էր ընտրողների 67%-ը, ապա 2008-ին՝ միայն 51%-ը: Ի՞նչ կլինի հիմա՝ հաշվի առնելով, որ ընդդիմադիր հիմնական ուժերն ընդառաջել են Խաթամիի եւ տնային կալանքի տակ գտնվող Մուսավիի կոչերին եւ որոշել են բոյկոտել մարտի 2-ի ընտրությունները:

Պահպանողական ճամբարը

Հետաքրքիր պայքար է ընթանում նաեւ պահպանողական շրջանակներում ապագա խորհրդարանում վճռական դիրքեր զբաղեցնելու համար:

Այստեղ, ինչպես եւ կանխատեսվում էր նախկինում, բավական լուրջ համախմբում է ընթացել Պայքարող հոգեւորականության ասոցիացիայի (չջվոթել Պայքարող հոգեւորականների միության հետ, որը ղեկավարում է Ս.Խաթամին) շուրջ, որը նպատակ ունի կարելու տեղ զբաղեցնել հաջորդ խորհրդարանում: Ասոցիացիան ղեկավարվում է դասական պահպանողական հեղինակավոր գործիչների կողմից (որոնց թվում է նույն Յաշեմի-Ռաֆսանջանին) եւ հաջողության դեպքում փորձելու է կոալիցիա ձեւավորել սահմանափակ բարեփոխական Գործադիր կառուցողականների կուսակցության հետ:

Ասոցիացիայի անդամ են նաեւ Փորձագետների ասամբլեայի ղեկավար (այս կառույցն է օժտված հոգեւոր առաջնորդի ընտրության իրավունքով) Մահդավի Կանին եւ Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի նախկին ղեկավար, Իրանում եւ Արեւմուտքում տաղանդավոր դիվանագետի եւ բանակցողի համբավ ունեցող Հասան Ռուհանին, այստեղ ընդգրկված է նաեւ նախկին փոխարտգործնախարար եւ ԼՂՀ հարցով նախկին բանագնաց Մահմուդ Վաեզին: Այս միավորման շուրջ են հավաքվել հին պահպանողականների բոլոր հիմնական ուժերը, որոնք փորձելու են վերահսկողություն հաստատել ապագա խորհրդարանի նկատմամբ:

Պահպանողականների ճամբարի պայքարի արդյունքներից է նաեւ ճարտարագետների իսլամական ընկերության անջատումն Իսլամական Իրանի կառուցողների ալյանսից, որը կոալիցիոն սկզբունքով միավորում

է ծայրահեղ պահպանողական հոսանքներին ու կազմակերպություններին: Հենց Իսլամական Իրանի կառուցողների այլանս է 2004-ին եւ 2008-ին համախմբել Իրանի ներկայիս նախագահ Մ.Ահմադինեժադին աջակցող բոլոր ուժերին եւ հանդիսացել նախագահի եւ ծայրահեղ պահպանողական այաթուլա Մ.Յազդիի հենարանը խորհրդարանում: Ճարտարագետների իսլամական ընկերության (որը ղեկավարում է Իրանի խորհրդարանի խոսնակ Ալի Լարիջանին) դուրս գալն այլանսից ծայրահեղ պահպանողականների ճամբարի եւ Մ.Ահմադինեժադի քաղաքական հենարանի տրոհման արդյունքն է:

Սակայն պահպանողականների ճամբարում ընթացող ամենակարեւոր զարգացումներից պետք է համարել Իսլամական հեղափոխության պահպանների կորպուսի եւ Բասիջի ներկայացուցիչների ավելացումը թեկնածուների շարքում, ինչը կարելի է համարել վերջին տարիներին ձեւավորված օրինաչափության տրամաբանական շարունակություն: Սակայն այս ընտրությունները կառանձնանան նաեւ նրանով, որ առաջին անգամ անվտանգության ուժերի ներկայացուցիչների մուտքը խորհրդարան պաշտոնապես խրախուսվում է երկրի առաջնորդի կողմից: Սրա վկայությունն է այն, որ անվտանգության մարմիններում Ալի Խամենեյի պաշտոնական ներկայացուցիչ, բարձրաստիճան հոգեւորական Ալի Սաիդին ղեկտեմբերին Իսլամական հեղափոխության պահպանների կորպուսի սպայակազմին կոչ արեց ակտիվորեն մասնակցել գալիք ընտրություններին եւ «պայքարում ձեռք բերված փորձը բերել իրանական օրենսդիր մարմին»:

Նա նաեւ նշեց, որ սա երկրի առաջնորդի դիրքորոշումն է, որը համարում է, որ ինչքան շատ լինեն Հեղափոխության պահպանների կորպուսի եւ Բասիջի սպաները մեջլիսում, այնքան կտուժեն իսլամական հանրապետության դեմ դավադրություններ կազմակերպողները: Հավանաբար, հենց այս պատճառով է, որ ճարտարագետների իսլամական ընկերության եւ Իսլամական Իրանի կառուցողների այլանսից առաջադրված թեկնածուների մեջ բավական շատ են նախկին սպաները, որոնցից շատերն, ըստ որոշ տեղեկությունների, հատուկ զորացրվել են անվտանգության ուժերից, որպեսզի ազատ մասնակցեն գալիք ընտրություններին: Այս ֆոնին բավական հետաքրքիր եւ աննախադեպ է Իսլամական հեղափոխության պահպանների կորպուսի հրամանատար, գեներալ Ջաֆարիի՝ վերջերս արած հայտարարությունը, համաձայն որի՝ անվտանգության ուժերի դերը երկրում ավելի է աճելու: Ջաֆարին, մասնավորապես, հայտարարեց, որ «Պահպանների կորպուսը եւ Բասիջը պատրաստվում են ճշգրտումներ մտցնել երկրի քաղաքական եւ մշակութային իրավիճակում»:

Կարծիք կա, որ անվտանգության ուժերի մուտքը խորհրդարան Ալի Խամենեյի կողմից կազմակերպված է ոչ թե սեփական շահերի պաշտպանության, այլ որդու՝ Մոջթաբա Խամենեյի դիրքերի ամրապնդման համար: Մ.Խամենեյին, հանդիսանալով Բասիջի բարձրագույն ղեկավարներից, կարելու էր է խաղացել 2009թ. նախագահական ընտրություններից հետո տեղի ունեցած ցույցերի ճնշման գործում, միեւնույն ժամանակ, ըստ արեւմտյան աղբյուրների, նա վերահսկում է ֆինանսական եւ տնտեսական բազմաթիվ ռեսուրսներ Իրանում: Հենց սա է շատերին ստիպում կարծել, որ Իրանի առաջնորդ Ալի Խամենեյին որդու համար պատրաստում է հեռու գնացող քաղաքական ապագա եւ այդ պատճառով որդուն աջակից անվտանգության ուժերին մղում է դեպի խորհրդարան:

Ինչեւէ, Իրանում կայանալիք ընտրությունները կարելու է նշանակություն են ունենալու այս պետության հետագա ճակատագրի համար: Ներկայում՝ արտաքին եւ ներքին վտանգների առկայության պայմաններում երկրի իշխանությունները գնում են իշխանության կենտրոնացման եւ ներքին քաղաքականության կոշտացման: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ նման քաղաքականությունն ունենում է ժամանակավոր դրական արդյունքներ, իսկ երկարաժամկետ կտրվածքով առաջացնում է հասարակական դժգոհության հեղափոխականացում: Հուսանք, որ Իրանը կխուսափի նման հեռանկարից:

ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ԻՐԱՆԻ ՇՈՒՐՋ

Արտաշես Տեր-Չարունյան

Թեև նախորդ տարիներին լարվածությունն Իրանի շուրջ՝ աճելով ու նվազելով, անսովոր երեւոյթ չէր դիտվում, սակայն վերջին շրջանում նկատվում է, որ Չայաստանի հարավային հարեւանին վերաբերող զարգացումները փոխել են իրենց բնույթը: Նրանք դարձել են անսովոր ագրեսիվ՝ նույն այդ նախորդ տարիների համեմատ, ինչն էլ թույլ է տալիս ենթադրել, որ Իրանի շուրջ իրավիճակ է փոխվում:

Մյուս կողմից, եթե այդ ագրեսիվությունը հիմնականում պայմանավորված է Իրանի նկատմամբ ԱՄՆ ու նրա եվրոպական եւ մերձավորարեւելյան գործընկերների ճնշմամբ, ապա որպես այդ ճնշման նպատակ առանձնանում են երկու կետեր՝

- կարճատեւ հեռանկարում տարածաշրջանային կարելոր հարցերի վերաբերյալ Թեհրանից կորզել հնարավորինս շատ զիջումներ,
- երկարատեւ հեռանկարում առավելագույնս թուլացնել Իրանում իշխող վարչակազմը:

Իրավիճակային դիտարկում

Հունվարի 23-ին Բրյուսելում կայացած Եվրոպական միության անդամ երկրների արտգործնախարարների խորհուրդը որոշում կայացրեց այս տարվա հուլիսի 1-ից արգելել ԵՄ անդամ բոլոր պետություններին՝ նավթ ու նավթամթերք ներմուծել Իրանից:

Նշենք, որ վերջին տվյալների համաձայն՝ յուրաքանչյուր օր Իրանը միջազգային շուկայում վաճառում է 2.3 մլն բարել նավթ, որից 450 հազարը գնում են ԵՄ անդամ պետությունները, հիմնականում՝ Իսպանիան, Հունաստանը եւ Իտալիան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Եվրոպական երկրները մտադիր են իրանական նավթի փոխարեն գնել սաուդական եւ ռուսական նավթ, իսկ մյուս կողմից էլ՝ Միացյալ Նահանգները շարունակում է ճնշումը Թեհրանի հետ առեւտրատնտեսական ծավալուն հարաբերություններ ունեցող մյուս պետությունների նկատմամբ, որպեսզի նրանք էլ իրաժարվեն իրանական նավթից եւ դադարեցնեն իրանական բանկերի հետ ֆինանսական գործարքները, Թեհրանի համար, իրոք, կարող է

խնդիր ծագել միջազգային շուկայում սեփական նավթի վաճառքի առումով:

Գաղտնիք չէ, որ նավթն իրանական վարչակազմի համար եկամտի առաջնային աղբյուր է, որից է կախված նաեւ սոցիալ-տնտեսական կայունությունը երկրում¹: Պատահական չէ, որ անցած տարվա դեկտեմբերին, երբ հայտնի դարձավ Եվրամիության մտադրության մասին (արգելել Իրանից նավթի ու նավթամթերքների ներմուծումը), իրանական կողմն անսովոր կոշտ արձագանքեց: Թեհրանը նախ դեկտեմբերի 24-ից ռազմածովային ուժերի լայնամասշտաբ զորավարժություններ («Վելայաթ-90») սկսեց, որոնք տեւեցին ինը օր եւ ընդգրկում էին հսկայական մի տարածություն՝ Պարսից ծոց, Յորդանի նեղուց, Արաբական ծով ու Ադենի ծոց: Եվ զորավարժությունների ժամանակ՝ դեկտեմբերի 27-ին, Իրանի առաջին փոխնախագահ Սոհամադ Ռեզա Ռահիմին հայտարարեց, որ եթե իրանական նավթի հետ կապված պատժամիջոցները մտնեն ուժի մեջ, ապա իսլամական հանրապետության զինված ուժերը կփակեն Յորդանի նեղուցը, որտեղով իրականացվում է նավթի համաշխարհային տեղափոխումների մոտ 40%-ը²:

Հատկանշական է, որ «Վելայաթ-90» անվամբ զորավարժությունների ժամանակ փորձարկվեց Յորդանի նեղուցը փակելու սցենար: Այդ զորավարժություններին Իրանն իրականացրեց նաեւ հեռահար հրթիռի փորձարկում, որն ի վիճակի է խոցել օբյեկտներ Իսրայելում, ինչպես նաեւ հարվածել Մերձավոր Արեւելքում տեղակայված ամերիկյան ռազմակայաններին: Ի հավելումն՝ հունվարի 6-ին Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ռազմածովային ուժերի իրանամատար, ծովակալ Ալի Ֆադավին հայտարարեց, թե փետրվարին իրանական ռազմածովային ուժերը նոր զորավարժություններ են անցկացնելու Յորդանի նեղուցի շրջանում:

Միացյալ Նահանգներն արձագանքեց իրանական կողմի քայլերին: Նախ Պենտագոնը հայտարարեց, թե ամերիկյան զինված ուժերի ներկայությունը Պարսից ծոցում համապատասխանում է միջազգային նորմերին, եւ Վաշինգտոնը մտադիր չէ շրջանից դուրս բերել իր ռազմածովային ուժերը: Կարճ ժամանակ անց՝ հունվարի 8-ին, հայտնի դարձավ, որ ի լրումն Պարսից ծոցում արդեն իսկ առկա «Ջոն Ստենիս» ավիակրի ու նրան ուղեկցող ռազմական նավերի, Միացյալ Նահանգները Պարսից ծոցին է մոտեցրել ռազմանավերի մեկ այլ խումբ՝ «Կարլ Վինսոն» ավիակրի գլխավորությամբ: Բացի այդ, Պենտագոնը Խաղաղ օվկիանոսից Յնդկական օվկիանոս՝ Պարսից ծոցին մոտ, ուղարկեց ռազմանավերի եւս մեկ խումբ՝ «Աբրահամ Լինքոլն» ավիակրի ղեկավարությամբ:

Պարսից ծոցի շրջան ռազմանավերի խումբ ուղարկեց նաև Ֆրանսիան՝ «Շառլ դը Գոլ» ավիակրի առաջնորդությամբ: Ծոց ուղեւորվեցին նաև բրիտանական մի քանի ռազմանավեր:

Նույն հունվարի 8-ին հայտարարությամբ հանդես եկավ ԱՄՆ պաշտպանության նախարար Լեոն Պանետան՝ նշելով, որ Իրանի կողմից Յորդնուզի նեղուցի փակումը Վաշինգտոնը կընկալի որպես «կարմիր գիծը» անցնել: Պանետայի հայտարարությունից երեք օր առաջ ավելի կոշտ խոսքերով էր հանդես եկել Մեծ Բրիտանիայի պաշտպանության նախարար Ֆիլիպ Յանոնը՝ նշելով, որ եթե Իրանը փակի Յորդնուզի նեղուցը, ապա Միացյալ Թագավորությունը ռազմական գործողություններ կսկսի՝ այն վերաբացելու համար: Սակայն հատկապես ուշագորավ էր հունվարի 13-ին The New York Times-ի հրապարակումը, ինչը հետո հաստատվեց իրանական աղբյուրների կողմից, ըստ որոնց՝ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման նամակ է հղել Իրանի գերագույն առաջնորդ, այաթուլա Ալի Խամենեյին՝ նախազգուշացնելով Թեհրանին գերծ մնալ Յորդնուզի նեղուցը փակելուց:

Փոխադարձ սպառնալիքները Վաշինգտոնի, նրա գործընկերների ու Թեհրանի միջև, անշուշտ, նորություն չեն, սակայն այս անգամ տարբերությունն այն է, որ այդ սպառնալիքներն ուղեկցվում են ռազմուժի նման ցուցադրությամբ եւ նման մակարդակի կոշտ հայտարարություններով: Մյուս կողմից, իրավիճակին լրջություն է հաղորդում այն հարցը, որի շուրջ ծավալվում է լարվածությունը. խոսքն իրանական նավթի մասին է: Ինչպես նշվեց, իրանական վարչակազմի համար նավթի վաճառքը կենսական կարեւորության հարց է: Դա հասկանում են նաև Միացյալ Նահանգներում ու եվրոպական տերություններում, եւ նախորդ տարիների ընթացքում (չնայած ԱՄՆ-ի կողմից սահմանված միակողմանի պատժամիջոցներին) իրանական նավթին չանդրադառնալը մի տեսակ ցուցիչ էր, որ Թեհրանի ուղղությամբ կիրառվող արտաքին ճնշումները կրում են իրավիճակային բնույթ: Այժմ պատկերը փոխվում է, ու եվրոպական երկրների որոշումը՝ դադարեցնել իրանական նավթի գնումը, նշան է, որ Իրանի դեմ ուղղված ԱՄՆ ու եվրոպական տերությունների քաղաքականությունը փոխել է բնույթը, ինչն էլ իրավիճակի փոփոխության ցուցիչ է:

Իրավիճակի փոփոխության մասին են վկայում նաև իրանական միջուկային ծրագրի շուրջ տեղի ունեցողը եւ այդ ֆոնին իրանա-իսրայելական հակամարտության սրացումը, որն ակտիվ կերպով ծավալվում է հատկապես վերջին շրջանում:

Իրանական նավթի ու Յորդնուզի նեղուցի շուրջ առաջացած լարվածության ֆոնին՝ հունվարի 8-ին Թեհրանը հայտարարեց, թե Կում

քաղաքից ոչ հեռու ընկած Ֆորդո բնակավայրի մոտ սկսել է գործել ուրանի հարստացման ստորգետնյա գործարան³: Իրանի ատոմային էներգիայի գործակալության ղեկավար Ֆերեյդուն Աբասին հավելեց, որ գործարանը կարող է իրականացնել ուրանի մինչև 20% հարստացում: Ինչն է ուշագրավ, որ Թեհրանի այս քայլը դատապարտեցին ոչ միայն Միացյալ Նահանգները, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան ու Իտալիան, այլև՝ Ռուսաստանը:

Երկու օր անց իսրայելական լրատվամիջոցները, հղում կատարելով իրենց երկրի հատուկ ծառայություններին, գրեցին, թե այս տարվա ընթացքում Թեհրանը նախատեսում է իր ստորգետնյա միջուկային օբյեկտներից մեկում իրականացնել մեկ կիլոտոն միջուկային ռումբի պայթեցում՝ նմանությամբ այն ռումբի, որը 2006թ. պայթեցրեց Հյուսիսային Կորեան: Ուշագրավ է, որ նույն օրը՝ հունվարի 10-ին, բրիտանական The Times-ը հրապարակեց Թել Ավիվի համալսարանին կից գործող Ազգային անվտանգության հետազոտությունների ինստիտուտի վերջերս պատրաստած զեկույցը, ըստ որի՝ 2013թ. «Իսրայելը պետք է պատրաստվի միջուկային Իրանի ի հայտ գալուն»:

Եվս մի քանի օր անց՝ հունվարի 18-ին, Իսրայելի ռազմական հետախուզության նախկին ղեկավար, զեներալ-մայոր Ամոս Յադլինը հայտարարեց, թե միջուկային զենքի ստեղծման համար Իրանը տիրապետում է անհրաժեշտ բոլոր տեխնոլոգիաներին ու նյութերին եւ զենքի ստեղծումը միայն այդ երկրի քաղաքական որոշման հարց է:

Հաջորդ օրը Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուն հայտարարեց, թե Իրանի ղեկավարությունը քաղաքական որոշում է կայացրել ստեղծել միջուկային զենք: Հատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ իր այդ հայտարարությունից երկու օր առաջ Նեթանյահուն չեղյալ հայտարարեց ապրիլին նախատեսված ամերիկա-իսրայելական համատեղ զորավարժությունները՝ Austere Challenge 12, որոնք պետք է ամենածավալունը լինեին պատմության ընթացքում: Թե՛ ամերիկյան, թե՛ իսրայելական աղբյուրների փոխանցմամբ, այդ կերպ Թել Ավիվն իր դժգոհությունն է հայտնում իրանական հարցում Վաշինգտոնի մոտեցման կապակցությամբ, որը ներկայում դեմ է իսլամական հանրապետության նկատմամբ ռազմուժի կիրառմանը: Այստեղ կարելոր է այն հանգամանքը, որ Թել Ավիվը դիմում է ամերիկա-իսրայելական հարաբերությունների տեսանկյունից նման կտրուկ միջոցի, ինչը, հաշվի առնելով Իրանի շուրջ ընթացող զարգացումները, պետք է որ վկայի հարցի՝ ներկայում գերկարելիության կամ, այսպես ասած, բարձր խաղաղույթների մասին:

ՉԵՏԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործընթացն ավարտված չէ, եւ գլխավոր հարցն է, թե ինչ ընթացք կստանան զարգացումները Եվրոպական միության արտգործնախարարների խորհրդի վերոհիշյալ որոշումից հետո:

Ի հարկէ, շատ բան կախված է Իրանի արձագանքից, սակայն կողմերից յուրաքանչյուրի ցանկացած քայլ, ըստ էության, լինելու է ժամանակավոր, քանի որ զարգացումների տրամաբանությունն ուղղված չէ իրավիճակի հանդարտեցմանը:

Մյուս կողմից, կարելու են Սիրիայի շուրջ ընթացող զարգացումները: Միջազգային բազմաթիվ փորձագետների համոզմամբ՝ Իրանի նկատմամբ ԱՄՆ ու նրա գործընկերների գործադրած ճնշման նպատակներից է հասնել սիրիական հարցում Թեհրանի զիջմանը: Սիրիայում ալ-Ասադների վարչակազմի տապալումը կարող է լրջորեն թուլացնել Իրանի դիրքերը տարածաշրջանում: Ճնշումը Դամասկոսի նկատմամբ աճում է, եւ պետք է սպասել, թե ինչ է առաջարկելու Թեհրանը սիրիական իր դաշնակցին:

¹ Արեւմտյան փորձագիտական գնահատականների համաձայն, ներկայում Իրանն իր պետական եկամուտների շուրջ 2/3-րդը ստանում է հենց նավթի վաճառքից:

² Ի հավելումն այդ հայտարարության՝ իրանական զինված ուժերի Գլխավոր սպայակույտի պետ, գեներալ-մայոր Աթաուլա Սալեհին եւ Իրանի պաշտպանության նախարար Ահմադ Վահիդին համապատասխանաբար հունվարի 3-ին եւ 4-ին հայտարարեցին, թե Միացյալ Նահանգները պետք է Պարսից ծոցից դուրս հանի իր ռազմածովային ուժերը, քանի որ տարածաշրջանային երկրներն ի զորու են սեփական ուժերով ապահովել Պարսից ծոցի անվտանգությունը:

³ Ի պատասխան արեւմտյան սպառնալիքների, Իրանը տեղափոխում է իր միջուկային օբյեկտները ստորգետնյա ապաստարաններ:

ՍԻՐԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

Արաքս Փաշայան

Գործընթացները Սիրիայում

Վերջին մեկ-երկու ամիսներին Սիրիայում տեղի ունեցան բազմաթիվ ահաբեկչական գործողություններ (հարձակումներ զինվորականների, ռազմական ու քաղաքացիական օբյեկտների, այդ թվում՝ դպրոցների վրա), խաղաղ բնակիչների առեւանգումներ ու սպանություններ: Հատկապես ցնցող էին Դամասկոսի երկու ահաբեկչությունները՝ 2011թ. դեկտեմբերի 23-ին պետական անվտանգության շենքի դիմաց եւ հունվարի 6-ին Դամասկոսի Միդան թաղամասում, որոնց ընթացքում զոհվեցին տասնյակ մարդիկ, հարյուրավորները վիրավորվեցին:

Դամասկոսի ահաբեկչություններից հետո, ի պաշտպանություն երկրի նախագահի, հասարակական շարժումներն ավելի ակտիվացան: Սիրիայի տարբեր բնակավայրերում, այդ թվում՝ մայրաքաղաքում եւ Հալեպում (որոնք շարունակում են մնալ համեմատաբար կայուն), անցկացվեցին միտինգներ ու երթեր մեծաթիվ երիտասարդների մասնակցությամբ, «Ալլահ, Սիրիա եւ Բաշար» հայտնի կարգախոսով: Դրանց մեջ առավել հիշարժան է հունվարի 11-ին Դամասկոսի Օմայան հրապարակի բազամարդ միտինգը, որին, ի դեպ, մասնակցեց եւ Ելույթ ունեցավ նախագահ ալ-Ասադը:

Սինչ այդ, հունվարի 9-ին, Դամասկոսում տեղի ունեցավ ահաբեկչության զոհերի հիշատակին նվիրված միջոցառում մուսուլման եւ քրիստոնյա բարձրաստիճան հոգեւորականության, այդ թվում՝ Մեծ մուֆտի Ահմադ Բադր Ադ-Դին Հասունի մասնակցությամբ: Ի դեպ, ահաբեկիչները մի քանի ամիս առաջ դաժան հաշվեհարդար տեսան Հասունի հետ, երբ վերջինս հրաժարվեց անցնել ապստամբների կողմը՝ սպանելով նրա երիտասարդ որդուն:

Նշենք, որ Սիրիայում ստեղծված իրավիճակով խիստ մտահոգված են երկրի քրիստոնյա փոքրամասնությունները, որոնք կազմում են բնակչության 6-9 տոկոսը: Քաղաքացիական պատերազմի դեպքում քրիստոնյաներին, ըստ ամենայնի, դժվար փորձություններ են սպասվում: Պատահական չէ, որ Սիրիայի կաթոլիկ եկեղեցու առաջնորդ Իզնատիոս Հովսեփ Երրորդ պատրիարքը գերմանական լրատվական գործակալություններից մեկին տված հարցազրույցում կոշտ քննադատության է ենթարկել ԱՄՆ-ին եւ ԵՄ երկրներին, որոնք, ինչպես միշտ, բախտի քմահաճույքին են թողել

Մերձավոր Արեւելքի եթնիկ ու դավանական փոքրամասնություններին եւ գործում են բացառապես սեփական աշխարհաքաղաքական շահերով՝ սպասելով Սիրիայում իսլամիստների հերթական հաղթանակին:

Երկրի վերջին շրջանի քաղաքական կյանքի թերեւս ամենանշանակալից իրադարձությունը ս.թ հունվարի 10-ին Բաշար ալ-Ասադի ելույթն էր Դամասկոսի համալսարանում, որտեղ նա կոշտ քննադատության ենթարկեց միջազգային եւ արաբական այն ուժերին, որոնք «ժողովրդավարության» եւ «մարդու իրավունքների» պաշտպանության տակ ձգտում են վնասել Սիրիային: Հանգամանորեն անդրադառնալով սիրիական զարգացումներում Արաբական պետությունների լիգայի (ԱՊԼ) բացասական դերին՝ նա նշեց, որ վերջին 60 տարիների ընթացքում այդ կազմակերպությունը ոչ մի շահեկան բան չի արել արաբական երկրների համար, անգամ չի հարգել սեփական կանոնադրությունը: Այդ իմաստով՝ ԱՊԼ-ն միայն անունով է արաբական, քանի որ Սիրիային անդամությունից զրկելը նշանակում է, որ կազմակերպությունը դավաճանել է իր իսկ արաբական բնույթին, ոչնչացրել արաբական ինքնության գաղափարը: Անկումային գնահատելով արաբական աշխարհի ներկա վիճակը՝ ալ-Ասադը ԱՊԼ-ն համարեց միջարաբական արդի հարաբերությունների արտացոլանքը:

Անդրադառնալով ճգնաժամը հաղթահարելու կազմակերպության առաջարկած քայլերին՝ ալ-Ասադը նշեց, որ իրենք երբեք չեն փակել դռները որեւէ արաբական նախաձեռնության առաջ՝ պայմանով, որ երկրի ինքնիշխանությունը հարգվի: Ակնարկելով Օոցի արաբական միապետություններին՝ նախազահը զարմանք հայտնեց, որ ժողովրդավարությունից խոսում եւ խորհուրդներ են տալիս այնպիսի երկրներ, որոնք նույնիսկ խորհրդարան չունեն, որտեղ երբեք ընտրություններ չեն անցկացվել: Չնայած արտաքին դավադրությանը, ըստ Բաշար ալ-Ասադի, ճգնաժամը կարելի է հաջող կերպով հաղթահարել միասնականության եւ հայրենասիրության շնորհիվ, հենվելով միայն սիրիացի ժողովրդի վրա եւ իրականացնելով բարեփոխումներ, որոնք արդեն սկսել են գործադրվել եւ կգործադրվեն՝ ի շահ Սիրիայի:

Նշենք, որ Սիրիայում վերջին շրջանում սկսել են կյանքի կոչվել մի շարք բարեփոխումներ: Թե որքանով դրանք կհաջողվեն, ցույց կտա ժամանակը: Քաղաքական կուսակցությունների մասին նոր օրենքի ընդունումից հետո արդեն սկսվել է կուսակցությունների գրանցման գործընթացը: Վերջիններս հիմնականում ազգային-լիբերալ ուղղվածություն ունեն: Դրանցում կրոնաքաղաքական ուղղվածությամբ շարժումներ չկան:

Սիրիական վարչակարգին ընդդիմադիր հիմնական իսլամական ուժը շարունակում է մնալ վտարանդիության մեջ գործող սիրիական «Մուսուլ-

ման եղբայրները»: Միաժամանակ, կրոնաքաղաքական ակտիվիստները Սիրիայում առանց օտար միջամտության հազիվ թե կարող են իշխանության գալ, քանի որ Սիրիան աշխարհիկ ավանդույթներ ունեցող երկիր է: Էթնոդավանական բարդ խճանկար ունեցող Սիրիայի համար հասարակական-քաղաքական կյանքի իսլամականացումը կարող է կործանարար նշանակություն ունենալ:

Վերադառնալով կուսակցությունների թեմային՝ նշենք, որ Սիրիայի սահմանադրության համաձայն՝ երկրում մինչ այդ ձեւականորեն գործում էր բազմակուսակցական համակարգ, սակայն համաձայն Սահմանադրության 8-րդ կետի՝ առաջնորդող դերը պատկանում էր Բասսին: Փետրվարին Սիրիայում հանրաքվեի կղրվի նոր սահմանադրության նախագիծն առանց 8-րդ կետի: Չայների մեծամասնությունը ստանալուց հետո այն կվավերացվի մարտին: Իսկ մայիս-հունիս ամիսներին Սիրիայում տեղի կունենան խորհրդարանական ընտրություններ, որին կմասնակցեն մի շարք քաղաքական ուժեր: Փոփոխություններ են կատարվել նաեւ ՋԼՄ-ի մասին օրենքում, եւ այժմ ձեւավորման մեջ են առանձին անկախ լրատվական գործակալություններ: Մշակման ընթացքի մեջ է նաեւ կոռուպցիայի մասին օրենքի նախագիծը: Նախագահի կողմից համաձայնեցման արդյունքում վերջին շրջանում արդեն հազարավոր բանտարկյալներ են ազատ արձակվել:

Սիրիայի գծով բրիտանացի հայտնի փորձագետ, լրագրող Պատրիկ Միլի (վերջինս հայտնի է իր «Պայքար Սիրիայի համար» գրքով) կարծիքով՝ Սիրիայում իսկապես կա ճգնաժամի քաղաքական լուծման հնարավորություն, եւ դա ազգային երկխոսությունն է: Սակայն մինչ այդ իշխանությունները պետք է նպաստավոր մթնոլորտ ստեղծեն՝ ձեռնամուխ լինելով բարեփոխումներին:

Չնայած իշխանությունների կողմից իրականացվող կառուցողական քայլերին՝ իրավիճակը Սիրիայում շարունակում է մնալ ծայրահեղ լարված: Ասվածի ապացույցն ապստամբների կողմից հունվարի 21-ին Դամասկոսի հյուսիս-արեւելքում գտնվող եւ 120.000 բնակիչ ունեցող Դունա թաղամասի գրավումն է: Այն ընդամենը 20 կմ է հեռու Դամասկոսից:

Զարգացումները Սիրիայի շուրջ

Սիրիայի շուրջ միջազգային զարգացումներում արմատական փոփոխություններ չեն գրանցվել: Արեւմուտքը եւ նրա դաշնակիցները նախկինի պես շարունակում են հետամուտ լինել Սիրիայի ներկա վարչակարգի տապալմանը, իսկ Ռուսաստանն ու Չինաստանը նախկինի պես

շարունակում են հակադարձել: Այս համատեքստում իրականացված ամենացուցադրական քայլը, թերևս, ռուսական ռազմանավերի զորավարժություններն էին Տարտուս նավահանգստում եւ Սիրիայի ջրային սահմաններում, որտեղից նրանք հեռացան հունվարի 10-ին: Չնայած ռուսական կողմը պնդում է, որ դրանք նախատեսված էին ավելի վաղ եւ կապ չունեին Սիրիայում տեղի ունեցող զործընթացների հետ, սակայն միանգամայն պարզ է, որ այդ քայլով Մոսկվան ցանկացավ Արեւմուտքին ցույց տալ, որ թույլ չի տա Սիրիայում լիբիական սցենարի կրկնությունը:

Միջազգային ասպարեզում Սիրիայի հետ կապված ամենաշոկային իրադարձությունը հունվարի 14-ին Կատարի էմիր Յամաբ բին Խալիֆա ալ Թանիի առաջարկությունն էր՝ Սիրիա արաբական զորքեր մտցնելու վերաբերյալ: Դրան հաջորդեց հունվարի 17-ին ՄԱԿ գլխավոր քարտուղար Պան Գի Մունի հայտարարությունն այն մասին, որ Սիրիայում զոհերի քանակն անցել է բոլոր հնարավոր սահմանները՝ առաջ բերելով իրենց կողմից ստույգ քայլեր ձեռնարկելու անհրաժեշտություն: Հատկանշական է, որ նա Սիրիայում բռնությունների միակ պատասխանատու համարում է իշխանություններին՝ անտեսելով այդ երկրում միջազգային ահաբեկչության ակտիվացման փաստը:

Մինչ այդ, այսպես կոչված «Ազատ սիրիական բանակը», որ զգալիորեն համալրված է դասալիքներով, միջազգային հանրությունից հերթական անգամ պահանջեց անհապաղ միջամտել սիրիական հակամարտությանը: Իսկ արդեն հունվարի 18-ին ՌԴ ԱԳ նախարար Ս.Լավրովը հիշեցրեց, որ նրանք, ովքեր կհամարձակվեն Սիրիայի դեմ ռազմական գործողություններ իրականացնել, չեն ստանա ՄԱԿ մանդատը:

Հավանաբար, հենց այս հանգամանքով էր թելադրված Սիրիայում *արաբական զորքեր* մտցնելու գաղափարը: Իսկ այդ հարցում վճռորոշ նշանակություն պետք է ունենար շուրջ մեկ ամիս Սիրիայում աշխատող ԱՊԼ 165 դիտորդների եզրափակիչ զեկույցը, որը պետք է հրապարակվեր հունվարի 29-ին Կահիրեում ԱՊԼ նիստի ժամանակ: Սակայն դիտորդական առաքելությունը, որը ԱՊԼ-ում համակարգում է Կատարը, որոշվեց երկարացնել մեկ ամսով: Իսկ հունվարի 23-ին ԱՊԼ-ն առաջարկեց Բաշար ալ-Ասադին՝ իշխանության փոխանցման մի ծրագիր, որը, ինչպես նաև դիտորդական առաքելության երկարաձգման առաջարկը, Սիրիայի իշխանությունները մերժեցին:

Վերադառնալով Սիրիայի հարցում Կատարի ստանձնած դերին՝ նշենք, որ այդ երկիրը, որպես տարածաշրջանում ԱՄՆ կարեւորագույն ռազմաքաղաքական դաշնակիցներից մեկը, պատասխանատու է նաև լիբիական դեպքերի եւ Մուամար Քադաֆիի վարչակարգի տապալման

համար: Այնպես որ, Կատարի հաջորդ թիրախն, ըստ ամենայնի, Սիրիան է: Ի դեպ, Կատարին է պատկանում «Ալ-Ջազիրա» միջազգային լրատվական գործակալությունը, որը Սիրիայի վերաբերյալ թերեւս ամենաշատ ապատեղեկատվություն տարածող լրատվամիջոցն է:

Կատարի դիրքորոշումը քննադատության ենթարկվեց արաբ մի շարք լրագրողներ ու քաղաքագետներ կողմից: Նրանք այդ երկրին, ըստ էության, առաջարկեցին արաբական զորքեր մտցնել Իսրայելի գրավյալ արաբական տարածքներ, Բահրեյն կամ Սաուդյան Արաբիա, որտեղ նույնպես խախտվում են մարդու իրավունքները: Բավական հետաքրքրական է հորդանանցի քաղաքագետ Ֆայեզ Շեհատրայի տեսակետը: Ըստ այդմ` Սիրիայի դեմ ուղղված քայլերը միտված են փլուզելու արաբական ազգային անվտանգության ողջ համակարգը: Իսկ այդ գործում «Կատարը վերածվել է սիոնիստական-ամերիկյան գերիշխանությունն արաբական տարածաշրջանում հաստատող գործիքի»:

Ըստ քաղաքագետի` Կատարի, Թուրքիայի եւ ՆԱՏՕ անդամ երկրների ծրագրերն իրականում նպատակ ունեն թուլացնելու Իսրայելի դեմ հակազդեցություն ցույց տվող ուժերին: Նա միաժամանակ հիշեցնում է, որ 1956թ. արաբները, միավորելով իրենց ուժերը, օգնեցին Եգիպտոսին` հաղթահարելու «Եռյակ ագրեսիան»` Իսրայելի, Ֆրանսիայի եւ Մեծ Բրիտանիայի կողմից. այժմ հերթը եկել է աջակցելու Սիրիային, որը նույնպես ենթակա է միջազգային ճնշումների:

Չետեւություններ

• Կասկածից դուրս է, որ Արեւմուտքին եւ նրա հովանավորությամբ գործող ուժային կենտրոններին չեն հետաքրքրում ո՛չ Սիրիայում անցկացվող բարեփոխումները, ո՛չ մարդկային զոհերը եւ ո՛չ էլ այդ երկրում ժողովրդավարության հեռանկարը: Ներկա փուլում նրանք հետաքրքրված են բացառապես վարչակարգի տապալմամբ, որի միջոցով հնարավոր կլինի փոխել Սիրիայի քաղաքական ուղենիշները: Դրա արդյունքում տարածաշրջանում կթուլանան նաեւ Իրանի եւ «Չիզբալլահի» դիրքերը:

• Որեւէ ռազմական միջամտություն Սիրիայում խիստ բացասական հետեւանքներ կունենա այդ երկրի համար` հանգեցնելով քաղաքացիական պատերազմի, քաոսի եւ անիշխանության` կասկածի տակ դնելով Սիրիայի ինքնիշխանությունը:

• Առաջիկայում սիրիական իշխանությունները, համագործակցելով դաշնակից ուժերի հետ, կփորձեն իրավիճակը երկրում պահել վերա-

հսկողության տակ: Ռազմական միջամտությունից խուսափելը, սակայն, բավարար չի լինի ճգնաժամը հաղթահարելու համար:

- Չկարողանալով հակադարձել Սիրիայի դաշնակիցներին՝ առաջին հերթին Ռուսաստանի Դաշնությանը, Արեւմուտքը, ըստ ամենայնի, կիրառարկի ալ-Ասադի վարչակարգը ռազմական ներխուժմամբ տապալելու մտքից՝ փոխարենը շարունակելով ռազմականորեն եւ ֆինանսապես աջակցել սիրիական ապստամբներին: Այդ դեպքում Սիրիան աստիճանաբար կներքաշվի քաղաքացիական պատերազմի մեջ:

- Սիրիայում հնարավոր քաղաքացիական պատերազմի դեպքում ավելի կմեծանա միջազգային միջամտությունը, քանի որ ուժային տարբեր կենտրոններ կսկսեն աջակցել հակամարտող կողմերից որեւէ մեկին, ինչպես դա տեղի ունեցավ Լիբանանի քաղաքացիական պատերազմի տարիներին (1975–1990):

- Սիրիայում Բաշար ալ-Ասադի վարչակարգի հնարավոր տապալումը կարելի է համարել Մերձավոր Արեւելքի նկատմամբ նեոգաղութատիրության դրսեւորում: Այն վերջնականորեն կթուլացնի Մերձավոր Արեւելքը, որտեղ Սիրիան առանձնանում էր որպես Իսրայելին հակազդող ուժ եւ տարածաշրջանային ավտանգության երաշխավոր: Կործանարար հարված կհասցվի էթնիկ եւ դավանական հանդուրժողականության մթնոլորտին եւ հնագույն քրիստոնեական համայնքներին:

**2012 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ.
ԸՍՏ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԲԱՆՆԵՐԻ
ԲԵՆԻԿԱՄԻՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

Ամերիկյան վերլուծական մի շարք կենտրոններ հրապարակել են 2012թ. քաղաքական զարգացումների վերաբերյալ կանխատեսումներ, որտեղ ներկայացվում են սպասվելիք հիմնական իրադարձություններն ըստ տարածաշրջանների եւ պետությունների: Նշենք, որ ըստ ամերիկյան վերլուծաբանների՝ 2012 թվականը միջազգային հարաբերությունների համատեքստում կունենա նույնպիսի նշանակություն, ինչպիսին ունեցել են 1989–1991 թվականները, երբ աշխարհը հրաժեշտ տվեց սառը պատերազմի ժամանակաշրջանին, դառնալով գրեթե միաբեւեռ՝ ԱՄՆ գերիշխանությամբ: 2012թ. աշխարհը մուտք կգործի նոր հարաբերությունների համակարգ, որին բնորոշ կլինեն բազմաբեւեռությունն ու անորոշության աճը:

ԱՄՆ

Բարաք Օբամայի վարչակազմն արտաքին քաղաքականությունում էական փոփոխություններ չի իրականացնի: ԱՄՆ հիմնական խնդիրը կշարունակի մնալ Իրանի նկատմամբ միջազգային ճնշման ավելացումը, այդ թվում՝ տնտեսական պատժամիջոցների կիրառմամբ: Սիրիայի նկատմամբ ԱՄՆ քաղաքականության գլխավոր նպատակն է հասնել Բաշար Ասադի վարչակազմի տապալմանը, սակայն ուղղակի զինված ներխուժման հավանականությունը շատ քիչ է: Վաշինգտոնը կփորձի կանխել Իրաքում անկայունության հետագա աճը եւ Իրանի ազդեցության մեծացումը: Միեւնույն ժամանակ, հարկ է նշել, որ ԱՄՆ արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունը կլինի խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը, որտեղ ԱՄՆ-ը դաշնակիցների հետ միասին քայլեր կձեռնարկի Չինաստանի ազդեցության սահմանափակման ուղղությամբ:

Եվրոպայում Օբամայի վարչակազմը կշարունակի հակահրթիռային պաշտպանության համակարգի տեղակայման գործընթացը՝ միեւնույն ժամանակ ջանալով խուսափել Ռուսաստանի հետ ուղղակի առճակատումից:

Եվրամիություն

Եվրամիությունում կշարունակվի ֆինանսական ճգնաժամը, միեւնույն ժամանակ, ամենայն հավանականությամբ, այն չի հանգեցնի Եվրագոտու փլուզմանը: Այնուամենայնիվ, ամերիկյան վերլուծաբանների կանխատեսումների համաձայն, Եվրամիությունը կշարունակի իր դանդաղ անկումը, կմեծանա անդամ պետություններից կապիտալի արտահոսքը:

Եվրամիության շարժիչ ուժ հանդիսացող Գերմանիան կփորձի օգտագործել ստեղծված ճգնաժամը Եվրամիությունում սեփական դիրքերի հետագա ուժեղացման եւ Եվրագոտու պետություններում գործող ֆինանսական ինստիտուտների մեխանիզմների վերափոխման նպատակով: Գերմանիայի կողմից առաջ քաշված բարեփոխումների հիմքը ֆինանսական վերահսկողության ուժեղացումն է ինչպես նոր միջպետական պայմանագրի ստորագրման, այնպես էլ Եվրագոտու անդամ պետությունների սահմանադրություններում համապատասխան փոփոխությունների իրականացման միջոցով: Չնայած Եվրագոտու մյուս պետություններն այնքան էլ հակված չեն հավելյալ տնտեսական լծակներ փոխանցել Եվրամիության կենտրոնական մարմիններին, սակայն Գերմանիայից նրանց ունեցած կախումը կհարկադրի նրանց հիմնականում ընդունել Բեռլինի պահանջները եւ ստորագրել ու խորհրդարաններում վավերացնել ֆինանսական վերահսկողության նոր մեխանիզմներ ենթադրող պայմանագիրը: Ամերիկյան վերլուծաբանները ենթադրում են, որ նոր պայմանագրի ստորագրմանն ուղղված բանակցությունների ծախսողումը կարող է հանգեցնել Եվրամիության փլուզմանը:

Ռուսաստան

Ռուսաստանի իշխանությունների հիմնական խնդիրը փորձագետները համարում են ներքաղաքական դաշտի վերածելումները: Ամերիկյան վերլուծաբանները գրեթե չեն կասկածում, որ Վլադիմիր Պուտինն առանց էական դժվարությունների երրորդ անգամ կզբաղեցնի նախագահի պաշտոնը եւ ձեռնամուխ կլինի իր անմիջական շրջապատի փոփոխություններին՝ հաշվի առնելով խորհրդարանական ընտրություններից հետո հասարակության շրջանում առկա դժգոհությունը:

Արտաքին քաղաքականությունում Ռուսաստանի հիմնական խնդիրը կլինի շարունակել ամրապնդել դիրքերը նախկին խորհրդային հանրապետություններում: Այդ նպատակին են ծառայում Ղազախստանի եւ Բելառուսի հետ միասնական տնտեսական տարածքի ձեւավորումը եւ դրանում Ղրղզստանի, ինչպես նաեւ Տաջիկստանի հնարավոր ընդ-

գրկումը: Միեւնույն ժամանակ, Պուտինը քայլեր կձեռնարկի տնտեսական ազդեցությունը քաղաքականի վերածելու ուղղությամբ, ընդ որում՝ դրան հասնելու հիմնական միջոցներից մեկը Եվրասիական միության կազմավորումն է, որի մեկնարկը Ռուսաստանը հույս ունի տալ 2015թ.:

Ռուսաստանն աստիճանաբար կամրապնդի դիրքերը նաեւ Ուկրաինայում՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ Եվրամիության հետ հարաբերությունների սերտացման հեռանկարները Կիեւի համար ավելի ու ավելի անորոշ են դառնում: Կրեմլը ակտիվ քաղաքականություն կորդեգրի նաեւ մերձբալթյան հանրապետություններում՝ ձգտելով հնարավորինս հասնել դրանց հակառուսական քաղաքականության հետեւանքների չեզոքացմանը: Ամենայն հավանականությամբ, Ռուսաստանն այս ուղղությամբ առավել մեծ հաջողություն կարձանագրի Լատվիայում:

Արեւմուտքի՝ առաջին հերթին ԱՄՆ-ի հետ հարաբերությունները կշարունակեն լարված մնալ, նախեւառաջ Եվրոպայում հակահրթիռային պաշտպանության համակարգերի տեղակայման խնդրի առնչությամբ: Միեւնույն ժամանակ, Ռուսաստանը կշարունակի Եվրոպական պետությունների, ինչպես նաեւ ԱՄՆ-ի եւ Եվրամիության միջեւ հարաբերությունների լարմանն ուղղված քաղաքականությունը: Եվրոպայում Ռուսաստանի գլխավոր դաշնակից կշարունակի մնալ Գերմանիան, հատկապես տնտեսությանը եւ անվտանգությանն առնչվող խնդիրներում, սակայն Ռուսաստանն առավել ակտիվ քաղաքականություն կիրականացնի Կենտրոնական Եվրոպայի պետություններում: Հաշվի առնելով Եվրամիության ներքին խնդիրները եւ ԱՄՆ աստիճանաբար նվազող ազդեցությունը՝ Ռուսաստանը Եվրամիությունում գործելու առավել մեծ հնարավորություններ կստանա:

Իրան

Մերձավոր Արեւելքում իրադարձությունները հիմնականում կգարգանան տարածաշրջանում իր ազդեցությունն ընդարձակելու Իրանի ջանքերի համատեքստում: Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերումն Իրանի համար նոր հնարավորություններ է ստեղծել: Միեւնույն ժամանակ, Իրանը հասկանում է, որ ԱՄՆ ազդեցության անկումն անընդհատ շարունակվել չի կարող, բացի այդ, թեեւ դանդաղ, սակայն հաստատականորեն տարածաշրջանում դիրքերն է ուժեղացնում Թուրքիան, որն այստեղ Իրանի հակակշիռն է: Ուստի Իրանը, ամենայն հավանականությամբ, կփորձի օգտվել 2012թ. ստեղծված հնարավորությունների պատուհանից եւ հնարավորինս ամրապնդել դիրքերը տարածաշրջանում:

Իրանի այս ջանքերն առավել մեծ ազդեցություն կունենան Սաուդյան Արաբիայի վրա: Վերջինս արդեն սկսել է կասկածել ԱՄՆ ինչպես հնարավորությունների, այնպես էլ ցանկության վրա՝ ապահովել Սաուդյան Արաբիայի շահերի պաշտպանությունը: Պարսից ծոցի համագործակցության խորհրդի անդամ մյուս պետությունները եւս անհանգստացած են Իրանի աճող ազդեցությունից՝ երկյուղելով, որ պաշտոնական Թեհրանը քայլեր կձեռնարկի Բահրեյնում եւ Սաուդյան Արաբիայի հիմնականում շիաներով բնակեցված եւ նավթով հարուստ նահանգներում հուզումներ առաջ բերելու ուղղությամբ: Իր հերթին Իրանը քայլեր կձեռնարկի Սաուդյան Արաբիայի հետ որոշակի պայմանավորվածությունների հասնելու ուղղությամբ, որը կբավարարի Իրանի ցանկությունները եւ, միեւնոյն ժամանակ, որոշակի երաշխիքներ կտրամադրի Սաուդյան Արաբիային: Նմանօրինակ սցենարի դեպքում հակառակորդների միջեւ կարող է ժամանակավոր զինադադար կնքվել, սակայն հաշվի առնելով Իրանի առջեւ ծառայած մարտահրավերները՝ ամենայն հավանականությամբ, Սաուդյան Արաբիան կմերժի Իրանի հետ պայմանավորվածություններ ձեռք բերելու առաջարկը եւ կշարունակի հավատարիմ մնալ ԱՄՆ-ի հանդեպ իր պարտավորություններին:

Իրաք

Իրաքում ամերիկյան փորձագետները կանխատեսում են ապակայունացման խորացում՝ պայմանավորված Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերմամբ, ինչպես նաեւ այդ պետությունում աստիճանաբար սրվող միջէթնիկական եւ միջկրոնական լարվածությամբ: Իրաքում Իրանի հիմնական նպատակը շիա տարբեր խմբերի միջեւ լարվածության թուլացումն ու միասնական շիա դաշինքի ձեւավորումն է: Իր հերթին, Թուրքիան կփորձի կանխել Յուսուֆային Իրաքում Իրանի ազդեցության հնարավոր տարածումը՝ այնտեղ մեծացնելով իր տնտեսական, ռազմական եւ հետախուզական ներգրավվածությունը:

Սիրիա

Սիրիայում ԱՄՆ, Սաուդյան Արաբիայի եւ Թուրքիայի հիմնական նպատակը նախագահ Բաշար Ասադի վարչակարգի տապալումն է եւ այդ պետությունն Իրանի ազդեցությունից դուրս բերելը: Սակայն, ամերիկյան վերլուծաբանների կարծիքով, առանց օտարերկրյա ուղղակի զինված միջամտության, Ասադի վարչակազմը կպահպանի իշխանությունը: Ստեղծված պայմաններում Սիրիայի իշխանությունները հարկադրված են

ավելի ու ավելի շատ հենվել Իրանի աջակցության վրա, ինչն իր հերթին հնարավորություն կտա Իրանին ամրապնդել դիրքերը Միջերկրածովյան ավազանում:

Թուրքիա

Ամերիկյան վերլուծաբանները գտնում են, որ Թուրքիային զգալի դժվարություններ են սպասվում տարածաշրջանում դիրքերի ամրապնդման գործընթացում: Չնայած ռազմատենչ հռետորաբանությանը՝ Թուրքիան բացահայտ զինված գործողություններ չի նախաձեռնի Սիրիայում, այլ կփորձի ջանքեր գործադրել սիրիական ընդդիմության միավորման ուղղությամբ: Միեւնույն ժամանակ, չնայած երկու պետությունների միջեւ լարվածության աճին, Թուրքիան կփորձի Իրանի հետ հարաբերությունները պահել ընդունելի մակարդակի վրա՝ թույլ չտալով դրանց վերջնական խզում: Թուրքական տնտեսության համար որոշակի դժվարություններ կարող է ստեղծել Եվրամիության տնտեսական ճգնաժամը, ինչը կարող է հանգեցնել թուրքական արտահանման ծավալների նվազմանը: Թուրքիայի վարչապետ Էրդողանի առողջական վիճակի շուրջ առկա անորոշ վիճակը կարող է բացասաբար ազդել Թուրքիայի ներքաղաքական գործընթացների, առաջին հերթին՝ նոր սահմանադրության ընդունման ընթացքի վրա:

Չինաստան

Չինաստանի հիմնական խնդիրը տնտեսության աճի տեմպերի պահպանումն է եւ դրա միջոցով սոցիալական լարվածության աճի կանխումը՝ հատկապես հաշվի առնելով 2012թ. Չինաստանում սպասվող քաղաքական վերնախավի փոփոխությունը: 2012թ. հոկտեմբերին նախատեսվում է Չինաստանի կունունիստական կուսակցության քաղբյուրոյի կազմի փոփոխություն, իսկ արդեն 2013թ. սկզբին նոր ընտրված ղեկավարները ձեռնամուխ կլինեն իրենց պարտականությունների կատարմանը:

Արտաքին քաղաքականության ոլորտում Չինաստանը կշարունակի արտերկրում ռեսուրսների ձեռքբերման եւ ակտիվ ներդրումների իրականացման քաղաքականությունը: Միեւնույն ժամանակ, Չինաստանը կփորձի գործընկերային հարաբերություններ պահպանել հարեւան պետությունների, առաջին հերթին ճապոնիայի եւ Հնդկաստանի հետ՝ դրանով փորձելով կանխել տարածաշրջանում Չինաստանի դիրքերի թուլացմանն ուղղված ԱՄՆ քաղաքականությունը:

ՊԱՏԵՐԱԶՄ, ԾԳՆԱԺԱՍ, ԶԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԱՅՂՊԴԻՄԻՆ ԿԼԻՆԻ 2012 ԹՎԱԿԱՆԸ

Հարցազրույց լեռ քաղաքագետ Գժեգոժ Զորբասի հետ

Հարց – Ինչպիսի՞ն կլինի աշխարհի համար 2012 թվականը:

Պատ. – Այն կլինի մեծ փոփոխությունների տարի: 2012թ. աշխարհը կդառնա փոփոխությունների ասպարեզ, ցավոք՝ անկանխատեսելի հետևանքներով:

Հարց – Ինչպիսի՞ն են լինելու հիմնական փոփոխությունները:

Պատ. – Այդ իրադարձությունների հիերարխիան դասավորելը հնարավոր չէ. դրանք բոլորն էլ շատ կարելոր են: Սակայն մենք կարող ենք սկսել Ռուսաստանից՝ մեր հարեւանից: Այն, ինչ մենք այսօր տեսնում ենք ռուսաստանյան քաղաքների փողոցներում, սոսկ նախաշեմն է այն մրցակցության, որի մեջ են մտնում հասարակությունը եւ իշխանական համակարգը: Հասարակական դիմադրությունն ու բողոքական տրամադրություններն աճելու են: Մարտին, երբ Ռուսաստանում անցնեն նախագահական ընտրություններ, գազաթնակետը, հնարավոր է, չլինի, բայց դրանք, ինչպես 2011թ. խորհրդարանական ընտրությունները, կդառնան փոփոխությունների կատալիզատոր. նրանք արագություն կհաղորդեն ժողովրդավարական շարժմանը:

Հարց – Ինչպե՞ս դրան կարծագանքեն ռուսական իշխանությունները:

Պատ. – Դա միանշանակորեն կանխատեսել դժվար է: Ռուսաստանում կա իշխանությունների դեմ հանդես եկող շարժումների ճնշման ավանդույթ: Իսկ Պուտինը, հավանաբար, տրամադրված է, որպեսզի պահպանի իշխանությունը: Բայց մյուս կողմից՝ ժողովրդավարական շարժումը դառնում է ավելի հզոր:

Հարց – Այս ամենը չի՞ վերաբերում, արդյոք, միայն խոշոր քաղաքներին:

Պատ. – Այդ տրամադրություններն էլ ավելի ուժեղ են համակում ռուսաստանյան գավառները: Չնայած լրատվամիջոցների հասանելիության բացակայությանը, ընդդիմությունն ունի հասարակայնության հետ կապի

այլ արդյունավետ մեթոդներ: Ռուսները մի ժողովուրդ են, որը տիրապետում է վիթխարի ներուժի եւ սեփական արժեքի հզոր գիտակցման: Եվ այստեղ աշխատում են ռուսների մեծապետական զգացումները: Ներկայիս կրենյան իշխանությունը չի արդարացնում հասարակ քաղաքացիների սպասումները, այն հեռանկար չի տալիս, որ Ռուսաստանի հետ աշխարհում ավելի շատ հաշվի կնստեն: Այս շարժումը նման է արաբական զարնանը: Ժողովրդավարացման ալիքն, ընդհանուր առմամբ, կտարածվի Արեւմուտքից դեպի Արեւելք:

Հարց – Այն կհասնի՞, արդյոք, Չինաստանին:

Պատ. – Պարտադիր չէ, քանզի չինացիները սկսել են իրենց երկրի նվաճումներով ավելի հպարտանալ: Չինաստանը շատ բնագավառներում հայտնվել է առաջատարների թվում, հասել տնտեսական մեծ հաջողությունների: Եվ դա ժողովրդավարական բարեփոխումների արգելակման գործոն է, որը չկա Ռուսաստանում:

Հարց – Անցնենք աշխարհի մյուս՝ առավել թեժ տարածաշրջաններին. կլինի՞, արդյոք, պատերազմ Իրանում:

Պատ. – Նման չարագուշակ կանխատեսումներ արդեն ոչ առաջին տարին են հնչում, ուստի դրանք արժեզրկվել են: Սակայն հավանականությունը, թե պատերազմը կբռնկվի 2012թ., անհամեմատ ավելի մեծ է, քան երբեւէ: Միայն հարց է, թե ում կողմից կլինի հարձակումը՝ Իսրայելի՞, թե՞ ԱՄՆ-ի: Թիրախ կդառնան այն լաբորատորիաները եւ վայրերը, որտեղ անցկացվում են զանգվածային ոչնչացման զենքի մշակումներ: Ապացույցներ, որ դրանք անցկացվում են, ներկայացրել է ԱԷՄԳ-ն:

Իսրայելը համոզված է, որ Իրանի ատոմային զենքը սպառնալիք է հրեական պետության գոյությանը: Իսրայելցիները գտնում են, որ իրանական վարչակարգը պատրաստում է նոր հոլոքոստ: Ուստի նրանք կարող են առանց վարանման կանխարգելիչ հարված հասցնել: Սակայն շահագրգիռ շատ կողմերի համար անհամեմատ նախընտրելի կլինեն, եթե հարվածը հասցներ ԱՄՆ-ը եւ իր վրա վերցներ դրա ողջ պատասխանատվությունը: Նման դեպքում տեղի չէր ունենա Իսրայելի ու նրա արաբ հարեւանների միջեւ հարաբերությունների խզում, իսկ ամերիկացիներին թաքուն կաջակցեին Պակիստանը եւ Սաուդյան Արաբիան: Պակիստանը միակ մուսուլմանական երկիրն է, որը տիրապետում է միջուկային զենքի, եւ նրա շահերից է բխում այդ մենաշնորհի պահպանումը: Ինչ վերաբերում է Սաուդյան Արաբիային, միջուկային զենքով սպառազինված Իրանը

կդառնար Պարսից ծոցի նոր հզոր տերություն՝ տարածաշրջանի երկրների միջազգային հիերարխիայում տեղաշարժելով Սաուդյան Արաբիային: Նրան հարկավոր է պահպանել իր հզորությունը եւ հեղինակությունը նաեւ այն բանի համար, որ այն, լինելով իսլամի սրբավայրերի պահապան, ցանկանում է կանգնել ողջ մուսուլմանական ընկերակցության գլուխ:

Աշխարհն, անշուշտ, կվրդովվեր Իրանի վրա հարձակումից, սակայն տարածաշրջանի պետությունները ծածուկ կսատարեին այդ գործողությանը: Խիստ կբողոքեին Ռուսաստանը եւ Չինաստանը, բայց իրականում ոչինչ չէին անի: Այդ հարվածը կլիներ ոչ թե միջուկային, այլ ավանդական (կոնվենցիոնալ) զենքի կիրառմամբ: Ո՛չ Իսրայելը, ո՛չ ԱՄՆ-ն այստեղ առաջինը զանգվածային ոչնչացման զենք չէին օգտագործի: Ցամաքային ներխուժում չէր լինի, այլ կլինեին միայն հարվածներ օդից եւ գործողություններ դեսանտի մասնակցությամբ:

Հարց – Այսինքն, պատերազմն, ըստ էության, կանխորոշված է:

Պատ. – Կա մի պայման, որի դեպքում պատերազմ չի սկսվի. եթե Իրանն արդեն միջուկային զենք ունի: Այդ դեպքում կստեղծվեր, այսպես կոչված, «սարսափեցման հաշվեկշիռ», ինչպիսին գոյություն ունի Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի, Չնդկաստանի եւ Պակիստանի կամ Յյուս. Կորեայի եւ ԱՄՆ-ի՝ որպես Չարավ. Կորեայի դաշնակցի միջեւ: Մի քանի օր առաջ Պենտագոնի ղեկավար Լեոն Պանետան հայտարարեց, որ Իրանը պատրաստ է մեկ տարուց էլ պակաս ժամկետում ստեղծել միջուկային մարտագլխիկներ: Սա կարող է նշանակել, որ դրանք նրա մոտ արդեն կան: Ո՛չ ԱՄՆ-ը, ո՛չ Իսրայելը չեն հանդգնի գրոհել, եթե 100 տոկոսով հանդված չլինեն, որ Իրանը պատասխան միջուկային հարված չի հասցնի: Երբ Յյուս. Կորեան ստեղծեց իր մարտագլխիկները, դարձավ անձեռնմխելի:

Այժմ խոսվում է, թե Իրանի հետ ենթադրական պատերազմում հաղթանակը կօգներ Բարաք Օբամային վերընտրվել, իսկ դեմոկրատներին՝ իրենց վերադարձնել Կոնգրեսը: Հասկանալի է՝ պարտությունը նրանց խիստ կվնասեր: Ամերիկյան վարչակազմն, անշուշտ, ուշադրության է առնում այս հանգամանքը: Շատ հանրապետական պատգամավորներ ուղղակիորեն ռմբահարումներ են խոստանում:

Հարց – Ինչպիսի՞ն կարող են լինել Իրանի դեմ պատերազմի հետեւանքները:

Պատ. – Միջուկային զենքի տարածումն աշխարհում առնվազն մի քանի տարով կդադարեցվեր: Պարսիկ հանրությունը, որը երկար տարիներ ընդվզում է այաթոլաների դեմ, կկարողանար տապալել ռազմական

պարտությամբ թուլացած վարչակազմը, սակայն մի պայմանով, որ հարվածը խորտակեր սոսկ միջուկային օբյեկտները, այլ ոչ թե ամբողջ երկիրը:

Հարց – Խոսելով Ռուսաստանի մասին՝ Դուք հիշատակեցիք արաբական գարունը: Որտե՞ղ այն դարձյալ կթողնի իր հետքը:

Պատ. – 2012թ. փոփոխությունների հերթական ասպարեզը կլինի Մերձավոր Արևելքը: Կրկին շատ վարչակարգեր կտապալվեն: Քաղաքացիական պատերազմը Սիրիայում արդեն այնպիսի չափեր է ընդունել, որը կարելի է համեմատել Լիբիայի ապստամբության հետ: Թեև այնտեղ դեռ տեղի չի ունեցել երկրի որեևէ հատվածի ազատագրում, բայց դա ժամանակի հարց է: Եկել է նաև Եմենի ժամանակը: Այստեղ ամեն ինչ կլինի արագ եւ ոչ այդպես արյունալի: Ողջ արաբական գարունն, առհասարակ, արեւմտյան մշակույթի վիթխարի ազդեցության օրինակ է: Արեւմտյան կենսակերպը եւ ազատության ցանկությունը կարող են հսկայական ազդեցություն ունենալ մյուս քաղաքակրթությունների վրա:

Հարց – Շարունակենք տեղաշարժվել արեւելք. ի՞նչ է լինելու Աֆղանստանի հետ:

Պատ. – Այստեղ լուրջ փոփոխություններ կլինեն, որոնք կցնցեն համաշխարհային հանրությունը: Ամերիկացիներն արդեն թալիբների հետ նախնական բանակցություններ են վարում: Լեհերը համոզված են, որ թալիբներին պետք է վերջնականապես ջախջախել՝ վրեժխնդիր լինելով նրանց կողմից սպանված զինվորների համար, իսկ ամերիկացի քաղաքական գործիչները որոշել են գնալ բանակցությունների՝ այն համարելով միակ ելքը: Նման ռազմավարություն կիրառեց Նիքսոն-Քիսինջեր երկյակը Վիետնամի հանդեպ: Նրանք ցանկանում էին «պատվով» դուրս գալ պարտված պատերազմից, եւ ուստի, ի զարմանս ամերիկյան հասարակության, բանակցություններ նախաձեռնեցին Վիետկոնգի եւ Հյուս. Վիետնամի հետ: Այժմ Օբամայի վարչակազմը համանման ռազմավարություն օգտագործում է թալիբների նկատմամբ:

Ամերիկացիներն Աֆղանստանում անցկացնում են սեփական քաղաքականությունը՝ հաշվի չնստելով ոչ մեկի, անգամ ամենամերձավոր դաշնակիցների՝ բրիտանացիների հետ: Ես չգիտեմ՝ կավարտվե՞ն, արդյոք, այդ բանակցությունները 2012թ., սակայն դրանք, անկասկած, առաջ կգնան:

Հարց – Ի՞նչ հետեւանքների կարող է հանգեցնել տնտեսական ճգնաժամը:

Պատ. – Այս տարի, անշուշտ, կաճի այն համոզմունքը, թե արեւմտյան համակարգն ապրում է ոչ միայն տնտեսական, այլեւ մշակութային ճգնաժամ: Ավելի հաճախ են լսվում կարծիքներ, որ արեւմտյան քաղաքակրթությունը հայտնվել է փակուղում, արեւմտյան երկրների հասարակությունը ծերանում, մահանում է, էլ ավելի դժվար է հասնել տնտեսական աճի եւ զարգացման, ավելանում է հոռետեսությունը, կորել է ապագայի հանդեպ հավատը: Պարադոքս է. Արեւմուտքն արաբների եւ ռուսների աչքերում ավելի հրապուրիչ է երեւում, քան իր սեփական: Ուստի այս տարի կսկսվի նոր գաղափարախոսության փնտրտուքը:

Հարց – Որտեղի՞ց ոգեւորություն վերցնել:

Պատ. – Օրինակ՝ առավել արագ զարգացող հասարակությունների մշակույթից: Ես նկատի ունեմ Չինաստանը (իհարկե՝ կոնֆուցիականությունը, այլ ոչ թե կոմունիզմը) կամ Հնդկաստանը եւ Բրազիլիան: Եվրոպացիները կհետեւեն նաեւ իրավիճակին ԱՄՆ-ում, քանզի արեւմտյան քաղաքակրթության ամերիկյան տարբերակը եվրոպականից ավելի դինամիկ է: Թեեւ Միացյալ Նահանգներն ունի լուրջ խնդիրներ, բայց գտնվում է ավելի լավ վիճակում, քան Հին աշխարհամասը եւ ընդունակ է զարգանալու: Դա այդպես է, մասնավորապես, շնորհիվ ներգաղթի արդյունավետ քաղաքականության: Ողջ աշխարհից ժամանած ներգաղթյալներն ԱՄՆ-ում «օտար մարմին» չեն, այլ բազմապատկում են ազգային ներուժը: Առավելություն են տալիս նաեւ լայն տնտեսական ազատությունը եւ նվազ վարչարարությունը: Այսպիսի ամերիկյան մոդելը եվրոպային կթվա առավել հրապուրիչ:

«Fakt», Լեհաստան

09.01.2012

Յուրեր Կեդրին. «ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՂԵԼ ՉԷ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՄԱՐ»

Յուրեր Կեդրին – ֆրանսիացի նշանավոր պետական գործիչ, նախկինում Ֆրանսուա Միտերանի մերձավոր զինակից, արտաքին գործերի նախարար: Միջազգային հարաբերությունների ոլորտի ամենահարգված մասնագետներից է:

Հարց – Խորհրդային Միության անկումը դարձավ աշխարհում արմատական փոփոխությունների մեկնարկային կետ: Ձեզ չի՞ թվում, արդյոք, որ դրա հետ կապված գլոբալ հաշվեկշռի անհետացումն ավելի շատ բացասական հետեւանքներ ունեցավ, քան դրական: Աշխարհն այդպես էլ չհավասարակշռվեց, անհավասարությունը խորացավ՝ միջազգային միջավայրը դարձնելով առավել վտանգավոր:

Պատ. – Պատմությունն իր իրողությունները պարտադրում է սահմանված սխեմայից դուրս: ԽՍՀՄ փլուզումից հետո ձեւավորված գլոբալ աշխարհում կան դրական եւ բացասական կողմեր՝ տարբեր յուրաքանչյուր երկրի, տարածաշրջանի ու սոցիալական խավի համար: Աշխարհը չի դարձել «առավել վտանգավոր», այնտեղ կան բազմաթիվ հին ու նոր ռիսկեր, անտեսանելի սպառնալիքներ (օրինակ՝ միջին խավի համար Արեւմուտքում), ինչպես նաեւ հնարավորություններ (ասենք՝ զարգացող երկրների համար):

Հարց – Ինչպե՞ս եք Դուք հասկանում բազմաբեւեռ աշխարհի էությունը 21-րդ դարի 2-րդ տասնամյակում: Այն ժամանակի ընթացքում փոփոխվո՞ւմ է:

Պատ. – ԽՍՀՄ փլուզումից հետո Արեւմուտքը հավատաց միատարր «միջազգային ընկերակցության» գոյությանը՝ հիմնված արեւմտյան արժեքների եւ նրանց հաղթանակի վրա («պատմության ավարտ»): Իրականում, թեւ արեւմտյան արժեքները համակողմանիորեն հրապուրիչ են, աշխարհը համընդհանուր մրցակցություն է, հատկապես խոշոր բեւեռների միջեւ: Այդ մրցակցությունը՝ բնակչության աճի ու կենսամակարդակի բարձրացման եւ, հետեւաբար, սպառման ավելացման հետ, սաստկացել է:

Հարց – 20-րդ դարի վերջին թվում էր, թե Եվրոպական միությունը դուրս է եկել արագ աճի ու զարգացման ուղեծիր, դարձել ապագա համաշխարհային քաղաքականության նախատիպ: Ո՞րն է սրընթաց նահանջի պատճառը: Չէ՞ որ խնդիրը ոչ թե տնտեսական է, այլ քաղաքական:

Պատ. – Ես երբեք չեմ մտածել, որ Եվրոպական միությունը մողել է աշխարհի համար, ու եթե այն հավակնել է դրան, ապա ճիշտ չէր: Եվրոպական կառուցվածքը յուրօրինակ պատասխան է կոնկրետ մասնակի դեպքի համար. Եվրոպան Երկրորդ աշխարհամարտից հետո: Կառուցումը հաջողությամբ եւ արագ ընթացավ իսկական, ուժեղ առաջնորդների օրոք՝ ընդհուպ ԵՄ սահմանադրության ձախողումը: Այդ ժամանակից վերնախավերը հանուն ֆեդերալիզմի, որը նրանց համադարման է թվում, ցանկանում են «վերագործարկել» Եվրոպան՝ ժողովուրդներից խլելով անկախության մնացորդները: Սակայն ազգերը դիմադրում են: Սա փակուղի է: Ժողովուրդները ձգտում են ոչ թե ձուլման եւ ժողովրդավարական իշխանությունից զրկման, այլ ցանկանում են, որպեսզի Եվրոպան պաշտպանի իրենց շահերը բազմաբեւեռ կոնֆլիկտներում, իսկ դրա համար առայժմ բավականաչափ գործ չի արվում:

Հարց – Եվրոպական միությունը ստեղծվեց մեկ գլխավոր նպատակով՝ որպեսզի այլեւս Եվրոպայում պատերազմ չլինի, առաջին հերթին՝ Գերմանիայի ու Ֆրանսիայի միջև: Դուք չէ՞ք վախենում, որ անցյալի ուրվականներն այժմ կկենդանանան:

Պատ. – Ոչ մի կապ չկա ներկայիս իրավիճակի (անգամ ճգնաժամի դեպքում) եւ Առաջին ու Երկրորդ աշխարհամարտերին նախորդող տարիների միջև: Չարժե խոսել «անցյալի ուրվականների» մասին սոսկ այն պատճառով, որ կտրուկ գլոբալացումով եւ ճգնաժամով ճնշված պետությունները, նախեւառաջ, մտածում են իրենց եւ իրենց քաղաքացիների շահերի մասին (որում զարմանալի ոչինչ չկա): Այսօր ազգայնամոլական պատերազմ չի հասունանում, ինչպես նախկինում, ավելին՝ չկա ռազմաշունչ ազգայնականություն, այլ կա, թերեւս, բնականոն կապվածություն ինքնությանը, հայրենիքին, որից հարկավոր չէ վախենալ:

Հարց – Դուք մի ժամանակ Ամերիկյան կոչել էք հիպերտերություն: Ինչպիսի՞ն են այժմ Միացյալ Նահանգների հեռանկարները: Կարելի՞ է, արդյոք, սպասել, որ այդ երկրի առաջնորդների հաջորդ սերունդը կսկսի քաղաքականության ռազմավարական վերանայումը՝ հեռանալով համաշխարհային գերիշխանության (առաջատարության) գաղափարից եւ, մեծ

չափով, կվերածվի «նորմալ» երկրի: Ի՞նչ է սպասվում անդրատլանտյան հարաբերությունների:

Պատ. – Հիպերտերությունը կոնկրետ մեկ ժամանակահատվածի՝ 1990-ական թվականների բնութագիրն է: ԱՄՆ-ը մնում է թիվ մեկ տերությունը եւ երկար ժամանակ կլինի այդպիսին, բայց առաջատարությունը, որ կպահպանի մոտակա տասնամյակներին, լավագույն դեպքում կլինի հարաբերական: Ամերիկան երբեք «նորմալ» երկիր չի դառնա (ի դեպ, Ռուսաստանը՝ նույնպես): Սակայն, ինչպես մյուս մեծ երկրներին, ամերիկացիներին եւս հարկ է լինելու համակերպվել ապրելու մի աշխարհում, ուր կան Չինաստան, Հնդկաստան, Բրազիլիա եւ տասնյակ այլ զարգացող երկրներ: Այդ ու նաեւ այն պատճառով, որ այսօր արեւմտյան երկրներին առանձնակի վտանգ չի սպառնում, որը կօգնի կրկին միավորել նրանց, անդրատլանտյան հարաբերությունները կմնան կարելու, բայց ավելի պակաս առանցքային: ՆԱՏՕ դերը կթուլանա:

Հարց – Տպավորություն է ստեղծվում, թե «սառը պատերազմից» իրականում հաղթող է դուրս եկել Պեկինը: Շարունակվո՞ւմ է, արդյոք, Չինաստանի աճը նույն հետագծով: Իսկ եթե այո, ապա անխուսափելի՞ է, արդյոք, առճակատման խորացումը Վաշինգտոնի ու Պեկինի միջեւ, ինչպես շատերն են այժմ ԱՄՆ-ում կարծում:

Պատ. – Չինաստանի արագացված զարգացումն, անշուշտ, կշարունակվի: Միաժամանակ, երկիրը կբախվի շրջակա միջավայրի պահպանման խնդիրներին եւ ավելի շատացող սոցիալական անհամաչափությունների: Միջին խավը քաղաքական համակարգի արդիականացման նպատակով ճնշում կգործադրի: ՉԺՀ տնտեսական եւ ռազմավարական կշռի մեծացումը կհանգեցնի ասիական հարեւանների ու Ռուսաստանի հետ հարաբերություններում լարվածության, բայց այն հնարավոր կլինի հաղթահարել: Չինաստանն ԱՄՆ-ի հետ աշխարհը չի կառավարի. բազմաբեւեռ աշխարհը հասարակ «Մեծ երկյակի» համար դարձել է չափազանց բարդ: Բայց եւ նրանց միջեւ առճակատումն անխուսափելի չէ: Խոշոր համաշխարհային բեւեռները երբեմն հակառակ շահեր են հետապնդում, սակայն փոխկախվածության իրողությունը նրանց կպարտադրի գտնել հավաքական որոշումներ:

Հարց – Գոյություն ունի՞, արդյոք, միջազգային ահաբեկչությունը՝ որպես ինքնուրույն եւ ամբողջական երեւույթ:

Պատ. – «Միջազգային ահաբեկչություն» բառակապակցությունը ոչինչ չի նշանակում: Ահաբեկչությունը տեխնիկա է, այլ ոչ թե կազմակերպություն: Որոշ խմբեր, որոնք այն կիրառում են, գործում են ողջ աշխարհում, մյուսները՝ ոչ: Ցանկացած դեպքում, ահաբեկիչները կարող են ստիպել տառապել, բայց չեն կարող հաղթել:

Հարց – ԽՍՀՄ փլուզումից հետո Ռուսաստանն ապրում է սեփական վերինաստավորման տանջալից գործընթացը: Ինչպիսի՞ն է լինելու Ռուսաստանը եւս 20 տարի անց: Եվրոպայի մա՞ս, Չինաստանի ծայրամա՞ս...

Պատ. – Նայելով Ֆրանսիայից՝ ես չեմ հասկանում, թե ինչու է Ռուսաստանը մշտապես իրեն հարց տալիս՝ Եվրոպա՞ է ինքը, թե՞ Ասիա: Նրա տեղը միանշանակ մեջտեղում է. պարտադիր չէ որպես կամուրջ, սակայն, անշուշտ, որպես այս աշխարհի խոշոր բեւեռներից մեկը:

«Россия в глобальной политике»

Դեկտեմբեր, 2011

Թուրքի բեն Ֆեյսալ. «ԲԱԶՄԱԲԵՎԵՌ ԱՇԽԱՐՀԸ ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ԲՈԼՈՐԻ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԻՆ»

Թուրքի բեն Ֆեյսալ ալ Սաուդ – Սաուդյան Արաբիայի թագավորական ընտանիքի անդամ, նախկինում սաուդյան հետախուզության ղեկավար, դեսպան ԱՄՆ-ում եւ Մեծ Բրիտանիայում:

Հարց – 1991թ. սկսած՝ համաշխարհային քաղաքականությունում ի՞նչ կարեւորագույն իրադարձություններ են տեղի ունեցել:

Պատ. – Պատմականորեն նշանավոր միջազգային իրադարձությունները նրանք են, որոնց ազդեցությունը տարածվում է կոնկրետ ժամանակի եւ տեղի սահմաններից դուրս: Գլխավորը տնտեսական եւ ֆինանսական գլոբալացման ծավալումն ու խորացումն է եւ նոր երկրների ծնունդը: Հիշողության են արժանի նաեւ հակամարտությունները Բալկաններում եւ Կովկասում, Եվրոպական միության ընդարձակումն ու ՆԱՏՕ նոր առաքելության երեւան գալը: Նույնիսկ 20 տարի անց մենք վերապրում ենք այն ամենը, ինչ տեղի ունեցավ 1990-ական թվականների սկզբին:

1990թ. հետո կարեւորագույն իրադարձությունն, անշուշտ, Խորհրդային Միության փլուզումն է, որը վերջ դրեց երկբեւեռ աշխարհին եւ հանգեցրեց ԽՍՀՄ վերափոխման Ռուսաստանի Պաշտպան՝ նոր քաղաքականությամբ եւ նկրտումներով:

Կարեւորությամբ երկրորդը ես կհամարեի Իրաքի ներխուժումը Քուվեյթ, ինչը խախտեց ստատուս-քվոն արաբական աշխարհում եւ հանգեցրեց ինտերվենցիայի վերջ տալուն ուղղված ջանքերի գլոբալացման: Այն նաեւ արաբներին հնարավորություն տվեց Մադրիդյան կոնֆերանսում խաղաղություն հաստատել Իսրայելի հետ: 1990-ական թվականներին մենք նաեւ բախվեցինք Պարսից ծոցի երկրների ֆինանսական պաշարների նվազման մարտահրավերներին, որոնք, միաժամանակ, ժողովրդագրական բում էին ապրում: Էթնիկական եւ կրոնական պառակտման ազդեցության տակ տեղի ունեցավ Իրաքի քաղաքացիների ազգային ինքնորոշման զգացումի ջնջում: Այն ամերիկացիներին սադրեց չմտածված քայլերի՝ Իրաքը «մյուս արաբական երկրների համար ժողովրդավարության նմուշի» վերածելու նպատակով: Իրականում ամերիկյան նեոպահպանողականները նման դատողություններով արդարացնում էին իրենց միլիտարիստական փիլիսոփայությունը:

Երրորդ իրադարձությունը, որը 10 տարի անց շարունակում է ստվեր գցել, 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունն է, որի միջոցով միջազգային ահաբեկչությունը հայտարարեց իր մասին՝ որպես համաշխարհային վտանգավոր երեւոյթի: Այն գլոբալ ընկերակցությունից պահանջեց պատասխան գործողություններ, որոնք վերածվեցին երկու ձգձգվող պատերազմների Աֆղանստանում եւ Իրաքում: Դրանք էապես ազդեցին համաշխարհային իրադրության, ինչպես նաեւ Սերժապոր Արեւելքի եւ Արեւմտյան Ասիայի իրավիճակի վրա, ստիպեցին կասկածել Ամերիկայի մտադրություններին եւ վարկաբեկեցին նրա արտաքին քաղաքականությունը, որը հանգեցրեց «միաբեւեռ աշխարհի» դարաշրջանի ավարտի: Սեպտեմբերի 11-ի ահաբեկչության ամենամանցանկալի արդյունքը համատարած իսլամատյացության առաջացումն է:

Զորորդ իրադարձությունն Ասիայի տնտեսական վերածնունդն է: Սկիզբը դրեցին Չինաստանն ու Չնդկաստանը, այնուհետեւ նրանց օրինակին հետեւեցին մյուսները: Համաշխարհային տերության կարգավիճակը, որին հասավ Չինաստանը, փոփոխեց ուժերի հաշվեկշիռն աշխարհում: Իսկ հարեւանին հասնելու Չնդկաստանի ձգտումն ապագայում կարող է վերածվել վտանգավոր մրցակցության, հատկապես եթե հաշվի առնենք, որ երկու երկրներն իրականացնում են վերազինման հավակնոտ ծրագրեր եւ ձգտում սահմանել ազդեցության ոլորտներ իրենց տարածաշրջանում եւ անգամ նրա սահմաններից դուրս:

Հարց – 1990-ական թվականներին երեւան եկավ նոր հասկացություն՝ քաղաքակրթությունների բախում: Այն չի՞ դառնա, արդյոք, ինքնաիրականացվող մարգարեություն: Եվ ո՞ւմ պետք է ավելի շատ մեղադրել այդպիսի սցենարի հնարավոր իրագործման համար՝ Արեւմուտքի՞ն, Արեւելքի՞ն, ահաբեկիչների՞ն, անպատասխանատու ինտելեկտուալների՞ն:

Պատ. – Ժամանակն ապացուցեց այդ տեսության կեղծ լինելը: Այն իր ներքին դիմամիկայով մարգարեություն էր, բայց ճիշտն ասած՝ նրա հեղինակները ցանկալին իրականության տեղ են ներկայացրել: Անկախ կրոնական եւ մշակութային կողմերից, վերջին երկու տասնամյակների իրադարձությունները, մեծ չափով, իրականացված քաղաքականության պտուղ էին: Սակայն նման մտածողությունը պետք է զգաստացնի. եթե այդպիսի տրամաբանությանը թույլատրվի գերակայել, այն կարող է ամենուրեք հանգեցնել աղետալի հետեւանքների: Կրոնները կոչված են պահպանելու մարդկությունը, այլ ոչ թե կործանելու այն. նրանց իդեալները, մյուս մարդասիրական գաղափարների հետ միասին, պետք է տանեն դեպի խաղաղ ապագա: Կա միայն մեկ մարդկային քաղաքակրթու-

թյուն: Այն ծառ է, որի արմատները խոր գնում են պատմության հողի մեջ, նրանից աճում է հզոր բուն, որից դուրս են գալիս բազմաթիվ ճյուղեր, նրանցից յուրաքանչյուրից՝ շատ այլ ենթաճյուղեր, եւ բուլորի վրա ձեւավորվում են ծաղիկներ, այնուհետեւ՝ պտուղներ, եւ դա անընդհատ գործընթաց է: Գյուղերն, անշուշտ, բազմազան եւ միմյանց փոխլրացնող մշակույթներն են, որոնք մարդիկ շարունակում են՝ սովորելով իրենց նախորդներից եւ փոխանցելով հաջորդ սերունդներին: Քաղաքակրթությունների բախում չկա: Մարդկությունը միշտ պայքարել է, որպեսզի պահպանի եւ ամրապնդի մեկ միասնական քաղաքակրթությունը:

Հարց – Ինչպե՞ս եք Դուք տեսնում արաբական աշխարհի ապագան՝ հատկապես 2011թ. իրադարձություններից հետո: Ինչպիսի՞ ժողովրդավարություն կարելի է (եւ արդյո՞ք, ընդհանրապես, կարելի է) սպասել արաբական աշխարհում: Կարո՞ղ են, արդյոք, Թուրքիան կամ Իրանն օրինակ ծառայել:

Պատ. – Հստակ է, որ արաբական աշխարհը թեւակոխել է խոր փոփոխությունների փուլ. տեղի են ունենում որոշ կառավարությունների տապալումներ, հայտնվում են նոր ուժեր, գործընկերությունները փոխվում եւ վերադասավորվում են: Դեռ վաղ է խոսել երկրների ապագայի մասին, որոնց սպասվում է այնքան ծանր անցումային շրջան: Այն կախված կլինի կողմնորոշումից, որ կընտրի այդ երկրներից յուրաքանչյուրը: Յույս կա, որ նրանք կհաղթահարեն դժվարությունները, որոնց հետ բախվում են, եւ կանցնեն այնպիսի քաղաքական կառուցվածքի, որը կհամապատասխանի նրանց ժողովուրդների հույսերին ու ձգտումներին: Յուսով եմ, որ նրանց հարկ չի լինի ընտրություն կատարել թուրքական եւ իրանական մոդելների միջեւ, որովհետեւ այն կլինի արաբական մոդելը:

Հարց – Կիսո՞ւմ եք Դուք, արդյոք, Արեւմուտքի մայրամուտի եւ մյուս երկրների, առաջին հերթին՝ Չինաստանի եւ Ասիայի պետությունների հզորացման մասին տեսակետը: Ինչպիսի՞ն է արաբական աշխարհի դերը գալիք աշխարհակարգում: Կարելի՞ է, արդյոք, սպասել արաբական երկրների համախմբմանը, եւ արդյո՞ք նրանք նկատելի դեր կխաղան համաշխարհային քաղաքականության մեջ:

Պատ. – Մեծ տերությունների վերելքները եւ անկումները բնական գործընթաց են, եւ պատմությունը կորոշի, թե որքանով է ճշմարտացի Արեւմուտքի մայրամուտի մասին տեսակետը: Սակայն արդեն այսօր մենք տեսնում ենք բազմաբեւեռ աշխարհի ձեւավորումը, ինչը կհանգեցնի

Արեւմուտքի եւ ուժի մյուս կենտրոնների միջեւ տարբերության կրճատման: Աշխարհը ստեղծված է բոլորի համար, ուստի հարկավոր է ընդունել այն փաստը, որ ավանդական գերիշխանությունն ու ազդեցության բաշխումը, որոնք շատ դարեր բնորոշ են եղել քաղաքականությանը, այժմ արդեն անցյալում են: Եվ բոլորին անհրաժեշտ է գնահատել այդ փոփոխությունները՝ որպես հավերժական խաղաղության հասնելու հնարավորություն, որին երազում է մարդկությունը: ԱՄՆ-ն ու Եվրոպան մնալու են նույնպիսի մեծ, ինչպես նախկինում, սակայն՝ այլ համատեքստում: Համերաշխ բազմաբեւեռ աշխարհը համապատասխանում է բոլորի սպասելիքներին: Արաբական ընկերակցությունն իր ռազմավարական դիրքով ու վիթխարի բնական պաշարներով, ինչպես նաեւ կրոնական եւ մշակութային հարուստ ժառանգությամբ կարող է մնան բազմաբեւեռ կառույցի ստեղծման մեջ ներդրում ունենալ, եթե ազատվի իրեն բզկտող կոնֆլիկտներից ու հակասություններից եւ համախմբվի:

«Россия в глобальной политике»

Դեկտեմբեր, 2011

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գ. Նժդեհ	
ՆԱԽ ՄԱՐԴ	1
Գագիկ Տեր-Հարությունյան	
«ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՆԱՆ» ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ	3
Հայկ Գաբրիելյան	
ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՐԴԻ ՓՈՒԼԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ	8
Սեւակ Սարուխանյան	
ԻՐԱՆԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ	14
Արտաշես Տեր-Հարությունյան	
ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ԻՐԱՆԻ ՇՈՒՐՋ	20
Արաքս Փաշայան	
ՍԻՐԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ	25
Բենիամին Պողոսյան	
2012 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ. ԸՍՏ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԲԱՆՆԵՐԻ	31
Գժեգոժ Զորբաս	
ՊԱՏԵՐԱԶՄ, ՃԳՆԱԺԱՄ, ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԱՅԴՊԻՍԻՆ ԿԼԻՆԻ 2012 ԹՎԱԿԱՆԸ	36
Յուրբեր Վեդրից	
«ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՄՈԴԵԼ ԶԷ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՄԱՐ»	41
Թուրքի բեն Ֆեյսալ ալ Սաուդ	
«ԲԱԶՄԱԲԵՎԵՌ ԱՇԽԱՐՀԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ԲՈԼՈՐԻ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԻՆ»	45

Շապիկին պատկերված է
Սատանի բերդը (Զլդըր գավառ)

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 4 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակները՝ «Arial Armenian», «Hay Helv»
եւ «VS Helvetica»:
Վկայական՝ ՕԼՍ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: